Ընթացք	<ol style="list-style-type: none"> 1. ԲԳԿ-ների կողմից Mulberry համակարգի միջոցով ՄԺԾԾ (այդ թվում առաջիկա տարվա պետական բյուջեի) ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքերի բյուջետային հայտերի ներկայացում՝ մեթոդական ցուցումներով սահմանված ձևանմուշին և ժամկետներին համապատասխան (ՄԺԾԾ /այդ թվում առաջիկա տարվա պետական բյուջեի բյուջետային հայտերը՝ ընթացիկ տարվա փետրվար, իսկ առաջիկա տարվա պետական բյուջեի լրամշակված հայտերը՝ ընթացիկ տարվա օգոստոս): 2. ԲԳԿ-ներից ստացված հայտերը հաշվառվում են և ստուգվում է ԲԳԿ-ների կողմից տրամադրված հայտերի առկայությունը, բացակայության դեպքում պահանջվում է ներկայացնել բացակայող հայտերը: 3. Ստուգվում է ԲԳԿ-ների կողմից տրամադրված հայտերի հիմնավորումների առկայության: 4. Հայտերը ամփոփվում են և ամփոփված ցուցանիշները մուտքագրվում է LS Budget համակարգ:

Մուտքագրվող տվյալներ	ԲՄ6/Մ Ոչ ֆինանսական ակտիվներից մուտքերի ձևանմուշ 1, ձևանմուշ 2
Ելքագրվող տվյալներ	Երևում է LS Budget-ից արտահանվող բոլոր հավելվածներում բացասական նշանով:

Վալիդացիա

Հայտերով ներկայացված ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից բյուջետային մուտքեր գծով նախորդ տարվա և ընթացիկ տարվա փաստացի ցուցանիշները համեմատվում են LS Finace համակարգում առկա համապատասխան տվյալների հետ:




Ստորաբաժանում Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն

Անվանում	ԲՄ7-ՄԺԾԾ (ներառյալ առաջիկա տարվա պետական բյուջեի) նախագծի հիմքում դրվող մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսման նպատակով պետական բյուջեի ծախսային մասի՝ արտաքին աղբյուրներից ստացվող վարկային ծրագրերի կանխատեսում
Նպատակ	ՀՀ պետական բյուջեի վարկային ծրագրերի գծով ծախսերի կանխատեսում
Տիրույթ	ՀՀ \$Ն, ԲԳԿ-ներ, LS Budget
Դերակատարներ	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն/ ԲԳԿ /, մակրոտնտեսական քաղաքականության վարչություն/ ՄԲԿ /, պետական պարտքի կառավարման վարչություն/ ՊՊԿ /
Ընթացք	<ol style="list-style-type: none"> 1. ԲԳԿ մարմինները (հայտատու մարմիններ) Mulberry համակարգի միջոցով բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն են ներկայացնում ՄԺԾԾ (այդ թվում առաջիկա տարվա պետական բյուջեի) արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային ծրագրերի, բյուջետային հայտերը՝ մեթոդական ցուցումներով սահմանված ձևաչափերին և ժամկետների համապատասխան (ՄԺԾԾ/այդ թվում առաջիկա տարվա պետական բյուջեի բյուջետային հայտերը՝ մինչև ընթացիկ տարվա փետրվար, իսկ առաջիկա տարվա պետական բյուջեի լրամշակված հայտերը՝ մինչև ընթացիկ տարվա օգոստոս): 2. ԲԳԿ-ներից ստացված հայտերը հաշվառվում են աշխատանքային xls ֆայլերում: Ստուգվում է ԲԳԿ-ների կողմից տրամադրված հայտերի առկայությունը՝ մասնավորապես, Յավելված 9-ը՝ “Արտաքին աղբյուրներից բյուջետային խողովակներով ստացվող վարկերի հաշվին իրականացվելիք ծրագրերը” և հավելված 11-ը՝ “Արտաքին աղբյուրներից բյուջետային խողովակներով ստացվող վարկային միջոցների հաշվին իրականացվելիք ծրագրերի գծով. ամփոփ բյուջետային ֆինանսավորումը”: Բացակայության դեպքում պահանջվում է ներկայացնել բացակայող հայտերը: 3. Ստացված հայտերում ուսումնասիրվում և ստուգվում է մեթոդական ցուցումներով պահանջվող հավելվածների լրացման ամբողջականությունը: 4. Ստուգվում է ԲԳԿ մարմինների կողմից տրամադրված նպատակային վարկային ծրագրերի հիմնավորվածությունը՝ հիմք ընդունելով օրենսդրական փոփոխությունները, կնքված պայմանագրերը և համաձայնագրերը: Հայտնաբերված թերացումների դեպքում՝ իրականացվում են քննարկումներ հայտատու մարմինների հետ, ինչի արդյունքում իրականացվում է հայտերի լրամշակում կամ լրացուցիչ հիմնավորումների և բացատրությունների ստացում ԲԳԿ-ների կողմից:

5. Հայտերի ամփոփում՝ հայտերը ըստ վարկային միջոցների և ՀՀ կառավարության համաֆինանսավորման տարանջատման ամփոփվում են աշխատանքային ֆայլում (xls ձևաչափով)՝ միաժամանակ կիրառելով ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փետրվարի 1-ի արտարժույթի փոխարժեքը:
6. Հայտերի ամփոփումից հետո իրականացվում է վարկային ծրագրերի կանխատեսումները: Կանխատեսումները կատարվում են՝ հիմք ընդունելով նախորդ տարիների փաստացի ցուցանիշները, ինչպես նաև ընթացիկ տարվա կանխատեսումները, առկա և սպասվող օրենսդրական փոփոխությունները, կնքված սակայն ուժի մեջ չմտած համաձայնագրերը, կնքված և դեռևս կնքվելիք պայմանագրերը՝ հաշվի առնելով վերջիններիս ավարտման ժամկետները
7. ՀՀ ՖՆ նախարարի հրամանով (ՀՀ 2023թ. բյուջետային գործընթացը սկսելու համար՝ ՀՀ ֆինանսների նախարարի «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի հունվարի 20-ի N 72-Ա որոշմամբ տրված հանձնարարականների կատարման ուղղությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունում իրականացվող աշխատանքների կատարման ժամանակացույցը հաստատելու մասին» 89-Ա հրաման սահմանված ժամանակացույցի համաձայն արտաքին վարկերի սպասարկման և մայր գումարի մարումների ծավալների գծով բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման համար ներգրավվելիք արտաքին վարկերի ծավալների կանխատեսումների տրամադրում պետական պարտքի կառավարման վարչությանը, որից հետո պետական պարտքի կառավարման վարչության կողմից բանավոր/աշխատանքային կարգով տրամադրվում է դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների՝ վարկերի ստացման և վարկերի և փոխատվությունների տրամադրման գծով վարկային ծրագրերի ժամկետների, մնացորդի վերաբերյալ տեղեկատվություն՝ ավելի ճշգրիտ վերլուծություն և կանխատեսում անելու նպատակով:
8. Մակրոտնտեսական քաղաքականության վարչությունից ստացված հարկաբյուջետային շրջանակի հիման վրա իրականացվում է ՄԺԾՃ փաստաթղթի ամբողջականացում:
9. ՄԺԾՃ ՀՀ Վարչապետի մոտ քննարկումներից հետո վերջնականացվում է վարկային ծրագրերի գծով առաջարկները և վերջիններս վերազնահատվում են մայիսի 1-ի փոխարժեքով:
10. Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության աշխատակցի կողմից արտաքին աղբյուրներց ստացվող նպատակային վարկային ծրագրերի համապատասխան միջոցառումների գծով ֆինանսական և ոչ ֆինանսական (մեթոդական ցուցումների հավելված 3-ի մաս 4-իո համապատասխան ձևաչափով (DOC3) excel/Arial AM(font) տարբերակի ֆայլերը) ցուցանիշների ավարտուն տեսքի բերված տվյալները վերջնական ամփոփում է աշխատանքային xls աղյուսակներում և մուտքագրվում LS Budget համակարգ:

	<p>11. LS budget համակարգ միաժամանակ կարող են մուտքագրել բաժնի աշխատակիցը և արագության նպատակով ըստ EXCEL տարբերակով մշակված ձևանմուշներում արտացոլված տվյալների LSOFT-ի համապատասխան աշխատակիցը:</p> <p>12. LS budget համակարգ, ըստ ծրագրերի և միջոցառումների, ներմուծվում է նաև ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ բաժնի աշխատակցի կողմից մշակված, վերջնական տեսքի բերված և ամփոփված մեթոդական ցուցումների հավելված 3-ի՝ Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափի մաս 4-ի՝ պետական մարմինների գծով արդյունքային(կատարողական ցուցանիշներ) ցուցանիշների համաձայն համապատասխան ձևաչափով (DOC3) excel/Arial AM(font) տարբերակի ֆայլերը:</p>
Մուտքագրվող տվյալներ	ԲՄ1 բիզնես գործընթացում նկարագրված ելքային տվյալ՝ ԲՄ1-1.11/Ե, Բ2-1.9/Ե և Բ2-1.11/Ե
Ելքագրվող տվյալներ	ԲՄ7/Ե - ՄԺԾԾ ընթացքում բյուջեի նախագծի հավելված 1, աղյուսակ 4 (նկարագրությունը՝ԲՄ13-10/Ե - Հավելված 1, Աղյուսակ 4 - Վարկային ծրագրեր), տես այս տեղ .
Վալիդացիա	Բյուջեի հայտերով ներկայացված ծրագրով նախատեսված ամբողջ գումարի և սահմանված ժամանակահատվածի կատարողականների մնացորդի համադրումը ներկայացված ՄԺԾԾ հայտերի գումարների հետ՝ ելնելով ծրագրի ավարտման ժամկետից:

ԲՄ7.1-Ենթապրոցես




Ստորաբաժանում	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն
Անվանում	ԲՄ8-Ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ենթավարկերի տրամադրում (դեֆիցիտ)
Նպատակ	ՀՀ պետական բյուջեի ենթավարկային ծրագրերի գծով ծախսերի կանխատեսում
Տիրույթ	ՀՀ \$Ն, ԲԳԿ-ներ, LS Budget
Դերակատարներ	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն/ ԲԳԿՎ /, պետական պարտքի կառավարման վարչություն/ ՊՊԿՎ /
Ընթացք	<p><i>Վարկային և դրամաշնորհային ծախսային ծրագրերից բացի նույն ընթացակարգով և մոտեցմամբ նաև ուսումնասիրվում և կանխատեսվում են ենթավարկային ծրագրերը, որոնք արտացոլվում են դեֆիցիտի հավելվածներում և հանդիսանում դեֆիցիտի միաժամանակ Արտաքին աղբյուրների (վարկերի ստացում) և Ներքին աղբյուրների (Վարկերի և փոխառությունների տրամադրում) տարրերից: Ենթավարկային ծրագրերը դրանք ՀՀ կառավարության և դոնոր կազմակերպությունների միջև կնքված համաձայնագրերով վարկային ծրագրերն են, որոնք հետագայում ՀՀ ֆինանսների նախարարության և ծրագիր իրականացնող կազմակերպությունների միջև կնքված ենթավարկային պայմանագրերով ծրագրերն են:</i></p> <ol style="list-style-type: none"> 1. ԲԳԿ մարմինները (հայտատու մարմիններ) Mulberry համակարգի միջոցով բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն են ներկայացնում ՄԺԾԾ (այդ թվում առաջիկա տարվա պետական բյուջեի) արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային ենթավարկային ծրագրերի, բյուջետային հայտերը՝ մեթոդական ցուցումներով սահմանված ձևաչափերին և ժամկետների համապատասխան (ՄԺԾԾ/այդ թվում առաջիկա տարվա պետական բյուջեի բյուջետային հայտերը՝ մինչև ընթացիկ տարվա փետրվար, իսկ առաջիկա տարվա պետական բյուջեի լրամշակված հայտերը՝ մինչև ընթացիկ տարվա օգոստոս): 2. ԲԳԿ-ներից ստացված հայտերը հաշվառվում են աշխատանքային xls ֆայլերում: Ստուգվում է ԲԳԿ-ների կողմից տրամադրված հայտերի առկայությունը՝ մասնավորապես, Հավելված 9-ը՝ “Արտաքին աղբյուրներից բյուջետային խողովակներով ստացվող վարկերի հաշվին իրականացվելիք ծրագրերը” և հավելված 11-ը՝ “Արտաքին աղբյուրներից բյուջետային խողովակներով ստացվող վարկային միջոցների հաշվին իրականացվելիք ծրագրերի գծով. ամփոփ բյուջետային ֆինանսավորումը”: Բացակայության դեպքում պահանջվում է ներկայացնել բացակայող հայտերը:


3. Ստացված հայտերում ուսումնասիրվում և ստուգվում է մեթոդական ցուցումներով պահանջվող հավելվածների լրացման ամբողջականությունը:
4. Ստուգվում է ԲԳԿ մարմինների կողմից տրամադրված նպատակային ենթավարկային ծրագրերի հիմնավորվածությունը՝ հիմք ընդունելով օրենսդրական փոփոխությունները, կնքված պայմանագրերը և համաձայնագրերը: Հայտնաբերված թերացումների դեպքում իրականացվում են քննարկումներ հայտատու մարմինների հետ, ինչի արդյունքում իրականացվում է հայտերի լրամշակում կամ լրացուցիչ հիմնավորումների և բացատրությունների ստացում ԲԳԿ-ների կողմից:
5. Հայտերի ամփոփում՝ հայտերը ըստ վարկային միջոցների և ՀՀ կառավարության համաֆինանսավորման տարանջատման ամփոփվում են աշխատանքային ֆայլում (xls ձևաչափով)՝ միաժամանակ կիրառելով ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փետրվարի 1-ի արտարժույթի փոխարժեքը:
6. Հայտերի ամփոփումից հետո իրականացվում է ենթավարկային ծրագրերի կանխատեսումները: Կանխատեսումները կատարվում են՝ հիմք ընդունելով նախորդ տարիների փաստացի ցուցանիշները, ինչպես նաև ընթացիկ տարվա կանխատեսումները, առկա և սպասվող օրենսդրական փոփոխությունները, կնքված սակայն ուժի մեջ չմտած համաձայնագրերը, կնքված և դեռևս կնքվելիք պայմանագրերը՝ հաշվի առնելով վերջիններիս ավարտման ժամկետները:
7. ՀՀ \$Ն նախարարի հրամանով (ՀՀ 2023թ. բյուջետային գործընթացը սկսելու համար՝ ՀՀ ֆինանսների նախարարի «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի հունվարի 20-ի N 72-Ա որոշմամբ տրված հանձնարարականների կատարման ուղղությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունում իրականացվող աշխատանքների կատարման ժամանակացույցը հաստատելու մասին» 89-Ա հրաման սահմանված ժամանակացույցի համաձայն արտաքին վարկերի սպասարկման և մայր գումարի մարումների ծավալների գծով բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման համար ներգրավվելիք արտաքին վարկերի ծավալների կանխատեսումների տրամադրում պետական պարտքի կառավարման վարչությանը, որից հետո պետական պարտքի կառավարման վարչության կողմից բանավոր/աշխատանքային կարգով տրամադրվում է դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների՝ վարկերի ստացման և վարկերի և փոխատվությունների տրամադրման գծով ենթավարկային ծրագրերի ժամկետների, մնացորդի վերաբերյալ տեղեկատվություն՝ ավելի ճշգրիտ վերլուծություն և կանխատեսում անելու նպատակով:
8. ՄԺԾԾ ՀՀ Վարչապետի մոտ քննարկումներից հետո վերջնականացվում է ենթավարկային ծրագրերի գծով առաջարկները և վերջիններս վերագնահատվում են մայիսի 1-ի փոխարժեքով:
9. Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության աշխատակցի կողմից արտաքին աղբյուրներց ստացվող ենթավարկային ծրագրերի համապատասխան միջոցառումների գծով ֆինանսական ցուցանիշների

	<p>ավարտուն տեսքի բերված տվյալները վերջնական ամփոփում է աշխատանքային xls աղյուսակներում և համապատասխան աշխատակցի կողմից մուտքագրվում LS Budget համակարգ:</p> <p>10. LS Budget համակարգ միաժամանակ կարող են մուտքագրել բաժնի աշխատակիցը և արագության նպատակով ըստ EXCEL տարբերակով մշակված ձևանմուշներում արտացոլված տվյալների LSOFT-ի համապատասխան աշխատակիցը:</p>
--	--

Մուտքագրվող տվյալներ	ԲՄ1 բիզնես գործընթացում նկարագրված ելքային տվյալ՝ ԲՄ1-1.11/Ե, Բ2-1.9/Ե և Բ2-1.11/Ե
Ելքագրվող տվյալներ	ԲՄ8/Ե - ՄԺԾԾ ընթացքում բյուջեի նախագծի հավելված 3 աղյուսակ 3-1.1 և աղյուսակ 3-1.1.1, տե ս այ ս տե դ
Վալիդացիա	Բյուջեի հայտերով ներկայացված ծրագրով նախատեսված ամբողջ գումարի և սահմանված ժամանակահատվածի կատարողականների մնացորդի համադրումը ներկայացված ՄԺԾԾ հայտերի գումարների հետ՝ ելնելով ծրագրի ավարտման ժամկետից:



FUS.1-Ենթապրոցես



պետական տուրքերի, այլ եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների հավելվածների աղյուսակների անկայություն


Ներկայացված տեղեկատվության համեմատում LS Finance համակարգում առկա փաստացի տվյալների հետ

տեղեկատվության աղբյուրների, իրավական կարգավորումների, կնքված պայմանագրերի, համաձայնագրերի և բացատրագրերի անկայություն

Ստորաբաժանում	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն
Անվանում	ԲՄ9-Բյուջեի դեֆիցիտի հաշվեկշռում
Նպատակ	Դեֆիցիտի հաշվեկշռում
Տիրույթ	ՀՀ ՖՆ, ԲԳԿ-ներ, LS Budget
Դերակատարներ	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն / ԲԳԿՎ /, պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կատարման վարչություն (ՊԲՆՊԿՎ), պետական պարտքի կառավարման վարչություն (ՊՊԿՎ)
Ընթացք	<ol style="list-style-type: none"> 1. Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կատարման վարչության և ԲԳԿ մարմինների (հայտատու մարմիններ) կողմից Mulberry համակարգի միջոցով ստացվում են ՄԺԾԾ (այդ թվում առաջիկա տարվա պետական բյուջեի) դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների՝ մուրհակների մարումների, տրամադրված վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքերի (Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կատարման վարչություն), արտաքին վարկերի ծավալների գծով (ԲԳԿ մարմիններ) հայտերը (ՄԺԾԾ/այդ թվում առաջիկա տարվա պետական բյուջեի) բյուջետային հայտերը՝ ընթացիկ տարվա փետրվար, իսկ առաջիկա տա 2. րվա պետական բյուջեի լրամշակված հայտերը՝ ընթացիկ տարվա օգոստոս): 3. Կատարվում է ստացված հայտերի ամփոփում և ստուգում: Անճշտությունների դեպքում՝ համագործակցելով հայտը տրամադրած վարչության համապատասխան աշխատակիցների հետ, կատարվում են ուղղումներ: 4. Իրականացվում է տրամադրված վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքերի և Արցախի Հանրապետությանը տրամադրվելիք միջպետական վարկի գումարների հաշվարկ: 5. Mulberry համակարգի միջոցով ՄԺԾԾ (այդ թվում առաջիկա տարվա պետական բյուջեի) մուրհակների մարումների, տրամադրված վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքերի, Արցախի Հանրապետությանը տրամադրվելիք միջպետական վարկի, վարկերի և փոխատվությունների տրամադրումից մուտքերի, ինչպես նաև արտաքին վարկերի ծավալների կանխատեսումները տրամադրվում են պետական պարտքի կառավարման վարչությանը:

6. Mulberry համակարգի միջոցով ստացվում են ՄԺԾԾ (այդ թվում առաջիկա տարվա պետական բյուջեի) դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների՝ պետական կարճաժամկետ պարտատոմսերի, գանձապետական պարտատոմսերից զուտ ֆինանսավորման, ելքերի ֆինանսավորմանն ուղղվող պետական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցների, կայունացման դեպոզիտային հաշվի համալրման և օգտագործման, ստացված վարկերի և փոխատվությունների մարման, Վրաստանին տրամադրված վարկի վերադարձի, միջազգային ֆինանսական կազմակերպությունների կապիտալում մասնակցության գծով ստանձնած պարտավորությունների կատարման կանխատեսումները պետական պարտքի կառավարման վարչությունից:
7. Ստացված տեղեկատվության հիման վրա իրականացվում է պետական բյուջեի դեֆիցիտի հաշվեկշռում՝ ըստ պետական կարճաժամկետ պարտատոմսերի, գանձապետական պարտատոմսերից զուտ ֆինանսավորման, մուրհակների մարումներից մուտքերի, վարկերի և փոխատվությունների տրամադրման, տրամադրված վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքերի, ելքերի ֆինանսավորմանն ուղղվող պետական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցների, կայունացման դեպոզիտային հաշվի համալրման և օգտագործման, վարկերի և փոխատվությունների ստացման, ստացված վարկերի և փոխատվությունների մարման, Վրաստանին տրամադրված վարկի վերադարձից մուտքերի, միջազգային ֆինանսական կազմակերպությունների կապիտալում մասնակցության գծով ստանձնած պարտավորությունների կատարման:
8. Մշակվում է ՄԺԾԾ դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների՝ ըստ առանձին տարրերի հավելված N 4 (x1s ձևաչափով):
9. Իրականացվում է ՄԺԾԾ դեֆիցիտի՝ 1-ին կետում նշված տարրերի վերազնահատում՝ պայմանավորված մայիսի 1 արտարժույթի կուրսի փոփոխությամբ:
10. Վերազնահատված ցուցանիշները Mulberry համակարգի միջոցով տրամադրվում են պետական պարտքի կառավարման վարչությանը:
11. Պետական պարտքի կառավարման վարչությունից Mulberry համակարգի միջոցով ստացվում են ՄԺԾԾ դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների՝ 5-րդ կետում նշված տարրերի գծով վերազնահատված կանխատեսումները:
12. Ստացված տեղեկատվության հիման վրա իրականացվում է ՄԺԾԾ դեֆիցիտի հաշվեկշռում՝ 6-րդ կետում նշված տարրերով:

	<p>13. Մշակվում է ՄԺԾճ ղեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների՝ ըստ առանձին տարրերի վերջնական հավելված N 4 (xls ձևաչափով):</p> <p>14. Իրականացվում է ՄԺԾճ փաստաթղթի վերջնականացում՝ ղեֆիցիտին վերաբերող տեքստային մասի մշակում (Գլուխ N 4) և համապատասխան հավելված N 4ի առկայություն:</p> <p>15. Դեֆիցիտի հավելվածի ցուցանիշների մուտքագրվում են LS Budget համակարգ:</p>
<p>Մուտքագրվող տվյալներ</p>	<p>ԲՄ9-1/Մ - Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կատարման վարչության հայտ, մուրհակների մարումներ - տե ս այ ս տե ղ</p> <p>ԲՄ9-2/Մ - Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կատարման վարչության հայտ, տրամադրված վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքեր - տե ս այ ս տե ղ</p> <p>ԲՄ9-3/Մ - Պետակա պարտքի վարչության կանխատեսումներ - տե ս այ ս տե ղ</p>
<p>Ելքագրվող տվյալներ</p>	<p>ԲՄ9-1/Ե - ՄԺԾճ հավելված 4՝ տե ս այ ս տե ղ (նկարագրությունը ԲՄ13 գործընթացի ԲՄ13-4/Ե - Դե ֆ ի գ ի տ)</p> <p>ԲՄ9-2/Ե - ՄԺԾճ տեքստային մաս, տե ս այ ս տե ղ</p>
<p>Վալիդացիա</p>	<p>ԲՄ9-2/Մ տվյալներից առանձնացվում են միայն իրատեսական տվյալները՝ հետագա վերլուծություններ իրականացնելու համար: Իրականացվում են թվաքանական ստուգումներ:</p>



Ստորաբաժանում	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն
Անվանում	ԲՄ10-ՄԺԾԾ(ներառյալ առաջիկա տարվա պետական բյուջեի) հայտերի ստացում, ուսումնասիրում, քննարկում և հաստատման ներկայացում
Նպատակ	ՀՀ պետական բյուջեի առաջիկա տարիների ծախսերի կանխատեսում
Տիրույթ	ՀՀ \$Ն, ԲԳԿ-ներ, Վարչապետի աշխատակազմ, LS Budget
Դերակատարներ	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն(ԲԳԿԿ), ԲԳԿ, Վարչապետի աշխատակազմ
Ընթացք	<ol style="list-style-type: none"> 1. ԲԳԿ մարմինները (հայտատու մարմիններ) Mulberry համակարգի միջոցով բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն են ներկայացնում ՄԺԾԾ հայտերը՝ մեթոդական ցուցումներով սահմանված ձևանմուշներին և ժամկետներին համապատասխան և առաջնորդվելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված նախնական չափաքանակներով (Չափաքանակներին վերաբերող գործընթացը մանրամասն նկարագրված է ԲՄ2 գործընթացում): 2. Հայտերը ստացվում են 2 փուլով՝ <ul style="list-style-type: none"> • պարտադիր և շարունակական հայեցողական ծախսերի մասով ներկայացվում են ընթացիկ տարվա մինչև մարտի 1-ը - նկարագրված է ԲՄ11 գործընթացում, • Նոր նախաձեռնությունների մասով ներկայացվում են ընթացիկ տարվա մինչև մարտի 15-ը - նկարագրված է ԲՄ12 գործընթացում: 3. Իրականացվում է ստացված հայտերում նշված տեղեկատվության ստուգում՝ համադրվում են հավելվածների առկայությունը, յուրաքանչյուր հավելվածի տեղեկատվությունը մեթոդական ցուցումների պահանջներին համապատասխան լրացված լինելը: Բացահայտված թերությունների հետ կապված խնդիրների դեպքում դրանք արձանագրվում են և բանավոր կամ գրավոր պահանջ է ներկայացվում ԲԳԿ մարմիններին հայտերի լրամշակման, հակառակ դեպքում իրականացվում է հայտերի վերլուծություն, որի ընթացքում ստուգվում են ներկայցված հավելվածներում ընդգրկված ֆինանսական տվյալների հաշվարկ հիմնավորումները: 4. Պարտադիր բնույթի ծախսերի դեպքում ստուգվում է պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը, իսկ հայեցողական ծախսերի դասվող միջոցառումների դեպքում ստուգվում է յուրաքանչյուր միջոցառման գծով իրավական ակտերի կամ իրավական կարգավորման առկայությունը:

5. Հայտնաբերված բացթողումների դեպքում՝ իրականացվում է բանավոր քննարկումներ հայտատու մարմինների հետ, ինչի արդյունքում ստացվում են կամ լրամշակված հայտեր, կամ էլ լրացուցիչ հիմնավորումներ ու բացատրություններ ԲԳԿ-ների կողմից:
6. Հայտերի ամփոփում՝ ՀՀ պետական բյուջեում ներառվող պարտադիր և շարունակական հայեցողական ծախսերին դասվող միջոցառումների մասով կազմվում է բյուջեում արտացոլվող ֆինանսական (Doc1=MTF) և ոչ ֆինանսական ցուցանիշների (Doc3) ներքին օգտագործման համար մշակված համապատասխան xls ֆայլը:
7. Հայտերի ամփոփում՝ միջոցառումների չափաքանակների վերաբերյալ \$Ն ձևավորում է դիրքորոշում և պատրաստում է Վարչապետի մոտ քննարկման փաթեթը (տեղեկանքներ, ֆայլեր, սլայդեր): Գործընթացը առավել մանրամասն նկարագրված է ԲՄ14-ում:
8. ՀՀ Վարչապետի մոտ քննարկումից հետո, ԲԳԿ մարմինների կողմից ստացվում է լրամշակված հայտերը, իսկ Վարչապետի աշխատակազմից՝ Վարչապետի մոտ քննարկումների արդյունքի արձանագրությունները:
9. Ստուգվում և համադրվում են լրամշակված հայտերում ՀՀ վարչապետի մոտ ՄԺԾՃ չափաքանակների քննարկումների արձանագրություններով նախատեսված մոտեցումների և հանձնարարականների պահանջներին համապատասխանելը, խնդիրների առկայության դեպքում պատրաստվում է համապատասխան տեղեկանքներ՝ լրացուցիչ քննարկման համար, իսկ խնդիրների բացակայության դեպքում՝ իրականացվում է ՄԺԾՃ փաստաթղթում արտացոլվող տեղեկատվության պատրաստում՝
 - LS Budget-ում մուտքագրվում է ՄԺԾՃ չափաքանակները (Վարչապետի մոտ քննարկումների արձանագրություններին համապատասխանող): Ծրագրում ֆինանսավորում բաժնից բացում ենք պլանավորում մասը, մտնում ենք Մուտքի ֆորմա 1, ընտրում ենք գերատեսչություն(ԲԳԿ), Գերատեսչություն կատարող(ԲՄԿ), խումբ (գործառական դասակարգում), ծրագիր (համակարգչային կող, համապատասխանում է գանձապետարանի ծրագրային կողի հետ): Բացված պատուհանում ընտրում ենք համապատասխան տնտեսագիտական հոդվածը և մուտքագրում թիվը և հաստատում:
 - LS Budget համակարգ է ներմուծվում սահմանված ձևանմուշին համապատասխան փաստաթուղթը՝ միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշները: Բացված պատուհանում “ներմուծում DOC 3” (համապատասխանում է մեթոդական ցուցումների հավելված 3-ի մաս 4-ին) կոճակի օգնությամբ փաստաթուղթը ներբեռնվում է համակարգ:
 - LS Budget համակարգ է ներմուծվում սահմանված ձևանմուշին համապատասխան փաստաթուղթը պետական բյուջեի ծախսային ծրագրերի գծով վերջնական արդյունքի ցուցանիշները: Բացված պատուհանում “ներմուծում APP3” (համապատասխանում է մեթոդական ցուցումների հավելված 3-ի մաս 3-ին) կոճակի օգնությամբ փաստաթուղթը ներբեռնվում է համակարգ:
 - ՄԺԾՃ փաստաթղթի Մաս 3-րդում տեղադրվում է ամփոփված տեքստային մասը:

Գործընթացը ենթակա է լրամշակման մինչև ՄԺԾՃ փաստաթուղթը ՀՀ Կառավարության նիստի ներկայացնելը (սովորաբար ընթացիկ տարվա հունիսի 9):
 * Յուրաքանչյուր տարի Lsoft համակարգի աշխատակիցը թարմացնում է ՄԺԾՃ բազան և տալիս մուտքի թույլտվություններ համապատասխան աշխատողներին՝ տվյալները մուտքագրելու համար:

Մուտքագրվող տվյալներ

ԲՄ10-1/Մ Վարչապետի մոտ քննարկումների արձանագրություններ

ԲՄ10-2/Մ Հավելված N 3 DOC3 - Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ
Մաս 4 ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Տվյալ	Նկարագրություն
Ծրագրի անվանում/դասիչ	տեղեկատու
Միջոցառման անվանում/դասիչ	տեղեկատու
Նկարագրություն	տեքստային
Միջոցառման տեսակ	տեղեկատու
Միջոցառումն իրականացնողի անվանումը	տեղեկատու
Լրացնել արդյունքի չափորոշիչի տեսակը	տեքստային դաշտ
Ցուցանիշներ	թվային՝ ներկայացվում է 5 տարվա կտրվածքով /2021-2025/
Լրացնել միջոցառման ավարտի տարեթիվը	տարեթիվ
Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)	թվային

ԲՄ10-3/Մ Հավելված N 3 APP3- Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ
Մաս 3. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Տվյալ	Նկարագրություն
Նպատակը	տեքստային դաշտ
Ծրագրի դասիչը և անվանումը	տեղեկատու
Չափորոշիչը	տեքստային դաշտ
Ելակետի ցուցանիշ	թվային
Ելակետի ժամկետ	տարեթիվ
Թիրախի ցուցանիշ	թվային
Թիրախի ժամկետ	տարեթիվ
Կապը ՀՀ կառավարության ծրագրով և ՀՀ գործող այլ ռազմավարական փաստաթղթերով սահմանված ՀՀ կառավարության քաղաքականության նպատակների և թիրախների հետ	տեքստային
Կապը ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների և ցուցանիշների հետ	տեքստային

ԲՄ10-4/Մ ծրագրի նկարագրություն

Տվյալ	Նկարագրություն
Տարի	տեղեկատու
Խումբ	տեղեկատու/գործառական դասակարգիչ/

	Ճրագիր	տեղեկատու/համակարգչային կողմ, համապատասխանում է գանձապետականի ծրագրային կողմի հետ /
	Գերատեսչություն	տեղեկատու/ԲԳԿ/
	Գերատեսչություն-կատարող	տեղեկատու/ԲՍԿ/
	ԲՄ10-5/Մ ՊՈԱԿ-ների ծախսակազման ձևանմուշ, տե ս այ ս տե դ	
Ելքագրվող տվյալներ	ԲՄ10-1/Ե DOC1 ֆինանսական ցուցանիշներ, տե ս այ ս տե դ	
	Տվյալ	Նկարագուրություն
	ԲԳԿ	տեղեկատու
	Ճրագրի անվանում/դասիչ	տեղեկատու
	Միջոցառման անվանում/դասիչ	տեղեկատու
	Տնտեսագիտական հոդված	տեղեկատու/ներկայացված է 2 նիշով/
	Նոր միջոցառումներ	պայմանական տարանջատում
	2019թ փաստ	թվային/փաստացի կատարողակ թվերը, LS Finace/
	2020թ փաստ	թվային/փաստացի կատարողակ թվերը, LS Finace/
	2021թ փաստ	թվային/փաստացի կատարողակ թվերը, LS Finace/
	2022թ. հաստատված բյուջե	թվային/հաստատված օրենք/
	2023թ ըստ 2023-2025թթ ՄԺՃՃ հայտ	թվային/ներկայացված հայտերից/

2024թ ըստ 2023-2025թթ ՄԺՃՆ հայտ	թվային/ներկայացված հայտերից/	
2025թ ըստ 2023-2025թթ ՄԺՃՆ հայտ	թվային/ներկայացված հայտերից/	
2023թ ըստ 2023-2025թթ ՄԺՃՆ \$Ն առաջարկ	թվային/մուտքագրվում է աշխատակիցների կողմից/	
2024թ ըստ 2023-2025թթ ՄԺՃՆ \$Ն առաջարկ	թվային/մուտքագրվում է աշխատակիցների կողմից/	
2025թ ըստ 2023-2025թթ ՄԺՃՆ \$Ն առաջարկ	թվային/մուտքագրվում է աշխատակիցների կողմից/	
2023թ. Առաջնահերթությունների ցանկ	թվային/մուտքագրվում է աշխատակիցների կողմից	
Ճանութություն առաջարկի հակիրճ	տեքստային	
ՀՀ կառավարության ծրագրի կապը	տեքստային	
Ճանութություն	տեքստային	
միջոցառման նախատեսման իրավական հիմքը	տեղեկատու (Հ - հայեցողական, ՀՇ - հայեցողական շարունակական, Պ - պարտադիր)	
Ճախսի նախատեսման իրավական հիմքը	տեղեկատու (Հ- հայեցողական, Պ- պարտադիր)	
2022 Ընթացիկ հաստատված բյուջե	թվային/բանաձև/	
2022 Ընթացիկ վարկ հաստատված բյուջե	թվային/բանաձև/	
2022 Ընթացիկ դրամաշնորհ հաստատված բյուջե	թվային/բանաձև/	
2022 կապիտալ հաստատված բյուջե	թվային/բանաձև/	
2022 կապիտալ վարկ հաստատված բյուջե	թվային/բանաձև/	

2022 կապիտալ դրամաշնորհ հաստաված բյուջե	թվային/բանաձև/	
2023 Ընթացիկ հայտ	թվային/բանաձև/	
2023 Ընթացիկ հայտ վարկ	թվային/բանաձև/	
2023 Ընթացիկ հայտ դրամաշնորհ	թվային/բանաձև/	
2023 կապիտալ հայտ	թվային/բանաձև/	
2023 կապիտալ հայտ վարկ	թվային/բանաձև/	
2023 կապիտալ հայտ դրամաշնորհ	թվային/բանաձև/	
2023 Ընթացիկ \$Ն	թվային/բանաձև/	
2023 Ընթացիկ \$Ն վարկ	թվային/բանաձև/	
2023 Ընթացիկ \$Ն դրամաշնորհ	թվային/բանաձև/	
2023 կապիտալ \$Ն	թվային/բանաձև/	
2023 կապիտալ \$Ն վարկ	թվային/բանաձև/	
2023 կապիտալ \$Ն դրամաշնորհ	թվային/բանաձև/	
Ամփոփ համեմատական		
Մակրոշրջանակ		
Ծախսեր	թվային/հաշվարկվող թիվ, տրամադրվում է մակրո վարչության կողմից/	
Ընթացիկ ծախսեր	թվային/հաշվարկվող թիվ, տրամադրվում է մակրո	

	վարչության կողմից/	
Ընթացիկ ծախսեր առանց տոկոսավճարների	թվային/հաշվարկվող թիվ, տրամադրվում է մակրո վարչության կողմից/	
Տոկոսավճարներ	թվային/հաշվարկվող թիվ, տրամադրվում է մակրո վարչության կողմից/	
Կապիտալ ծախսեր	թվային/հաշվարկվող թիվ, տրամադրվում է մակրո վարչության կողմից/	
Ընդամենը ծախսեր, այդ թվում	թվային/հանրագումար/	
Ընթացիկ ծախսեր	թվային/հանրագումար/	
Ընթացիկ ծախսեր առանց տոկոսավճարների	թվային/հանրագումար/	
Կապիտալ ծախսեր	թվային/հանրագումար/	
ԲԳԿ-ներ	տեղեկատու	
Ընթացիկ ծախս ներքին աղբյուրներ	թվային/բանաձև, ձևավորվում է doc1-ից/	
Ընթացիկ ծախս արտաքին աղբյուրներ	թվային/բանաձև, ձևավորվում է doc1-ից/	
Կապիտալ ծախս ներքին աղբյուրներ	թվային/բանաձև, ձևավորվում է doc1-ից/	
Կապիտալ ծախս արտաքին աղբյուրներ	թվային/բանաձև, ձևավորվում է doc1-ից/	
Տոկոսավճարներ/միայն ՏՆ-ի դեպքում/	թվային/բանաձև, ձևավորվում է doc1-ից/	
Ընթացիկ ծախս չբաշխված/ՀՀ Կառավարության դեպքում/	թվային/բանաձև, ձևավորվում է doc1-ից/	






ՀՀ Կառավարության պահուստային ֆոնդ/ՀՀ Կառավարության դեպքում/	թվային/բանաձև, ձևավորվում է doc1-ից/	
Կապիտալ ծախս չբաշխված/ՀՀ Կառավարության դեպքում/	թվային/բանաձև, ձևավորվում է doc1-ից/	
2021թ. ՀՀ պետական բյուջե փաստ	թվային/բանաձև, ձևավորվում է doc1-ից	
2022թ. ՀՀ պետական բյուջե	թվային/բանաձև, ձևավորվում է doc1-ից	
2023թ.	թվային/բանաձև, ձևավորվում է doc1-ից	
2024թ.	թվային/բանաձև, ձևավորվում է doc1-ից	
2023թ. ծախսային կողմնորոշիչ	թվային/լրացնում է աշխատակիցը, ելնելով մակրոշրջանակից, չպետք է գերազանցի Ընթացիկ ծախսեր մակրոյով սահմանված սահմանված գումարին/	
2023թ. ՄԺԾՃ Հայտ	թվային/բանաձև, ձևավորվում է doc1-ից	
2023 ՖՆ առաջարկ	թվային/բանաձև, ձևավորվում է doc1-ից	
Տարբերություն 2023թ. Չափաքանակ/Հայտ	թվային/բանաձև-չափաքանակի և հայտի տարբերություն/	
Տարբերություն 2023թ. Հայտ/ՖՆ առաջարկ	թվային/բանաձև-հայտի և ՖՆ առաջարկի տարբերություն/	

ԲՄ10-2/Ե DOC3=**ԲՄ10-2/Մ, ԲՄ10-3/Մ**

Գործընթաց ԲՄ13-ի ելքային տվյալներ (ՄԺԾՃ հավելվածներ)

Վալիդացիա

Ստացված հայտերի տվյալները համադրվում են Վարչապետի մոտ քննարկումների արդյունքում արձանագրությունների տվյալների հետ:



Ստորաբաժանում	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն
Անվանում	ԲՄ11-Պարտադիր և շարունակական հայեցողական ծախսեր
Նպատակ	ՀՀ պետական բյուջեի առաջիկա տարիների ծախսերի կանխատեսում
Տիրույթ	ՀՀ \$Ն, ԲԳԿ-ներ
Դերակատարներ	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն
Ընթացք	<ol style="list-style-type: none"> 1. ԲԳԿ մարմինները (հայտատու մարմիններ) Mulberry համակարգի միջոցով բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն են ներկայացնում ՄԺԾԾ հայտերը՝ մեթոդական ցուցումներով սահմանված ձևանմուշներին և ժամկետներին համապատասխան (պարտադիր և շարունակական հայեցողական ծախսերի մասով՝ մինչև ընթացիկ տարվա մարտի 1-ը /ամանց նոր նախաձեռնությունների/, իսկ հայեցողական ծախսերի և նոր նախաձեռնությունների մասով՝ մինչև մարտի 15-ը) և առաջնորդվելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված նախնական չափաքանակներով(Գործընթացը մանրամասն նկարագրված է Բ1-ում): 2. ԲԳԿ-ներից ստացված հայտերը հաշվառվում են՝ վերջիններում ներառված պարտադիր և շարունակական հայեցողական ծախսերը՝ միջոցառումների մակարդակով: 3. Ստուգվում է համապատասխանությունը հայտերով ներկայացված պարտադիր և շարունակական հայեցողական ծախսերի ներկայացված տեղեկատվությունը մեթոդական ցուցումներով պահանջվող ձևաչափին: 4. Ստուգվում է <ul style="list-style-type: none"> - պարտադիր բնույթի ծախսերի դեպքում՝ ծախսերի պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը, ինչպես նաև հայեցողական պարտավորությունների շրջանակը, - հայեցողական ծախսերին դասվող միջոցառումների դեպքում՝ յուր. միջոցառման գծով իրավական ակտերի կամ իրավական կարգավորման առկայությունը: - կապիտալ բնույթի ծախսերի դեպքում ստուգվում են ներկայացված հավելվածներում ընդգրկված ֆինանսական տվյալների հաշվարկ հիմնավորումները (շինարարական աշխատանքների դեպքում՝ փորձագի-տական դրական եզրակացություն ունեցող նախագծանախահաշվային փաստաթղթերը):

5. Բացահայտված թերությունների հետ կապված խնդիրների դեպքում դրանք արձանագրվում են և բանավոր կամ գրավոր պահանջ է ներկայացվում ԲԳԿ մարմիններին հայտերի լրամշակման, հակառակ դեպքում իրականացվում է հայտերի վերլուծություն:
6. Հայտերի հետ ԲԳԿ-ները տրամադրում են ներկայացված ծրագիր միջոցառումների հիմնավորումները՝ ծախսակազմումները՝ հիմք ընդունելով ՀՀ \$Ն կողմից տրամադրված մեթոդական ցուցումների ձևանմուշները (ձևանմուշները ներկայացված են ԲՄ1 գործընթացի ԲՄ1-2.2/Ե-ԲՄ1-2.17/Ե ելքային տվյալներում): Ստուգվում է ծախսակազմման փաստաթղթերով ներկայացված հաշվարկները, ինչպես նաև գնահատման համար անհրաժեշտ հիմնավորումների առկայությունը՝ տեղեկատվության աղբյուրների, ռազմավարություն-բյուջե կապակցվածության, ծախսերի վրա ազդող գործոնների, ոչ ֆինանսական ցուցանիշների, տնտեսագիտական դասակարգման հոդվածների և այլ հիմնավորումների մասով:
7. Կատարվում է հայտում ներկայացված տեղեկատվության ստուգում՝ ծախսերի համադրում ինչպես հաստատված բյուջեով նախատեսված ծախսերի, այնպես էլ փաստացի կատարողականի հետ (տրամադրում է Բյուջեների կատարման հաշվետվությունների վարչությունը՝ արտահանված LS Finance համակարգից՝ ԲՄ11-2/Մ):
8. Հայտերի ամփոփում՝ ՀՀ պետական բյուջեում ներառվող պարտադիր և շարունակական հայեցողական ծախսերին դասվող միջոցառումների մասով կազմվում է բյուջեում արտացոլվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների ներքին օգտագործման համար մշակված համապատասխան xls ֆայլը (Doc1)(Ֆայլի նկարագրությունը տես ԲՄ10 գործընթացի ԲՄ10-1/Ե ելքային տվյալներում):
9. Չընդունված միջոցառումների և/կամ ծախսերի մասով՝ կազմվում է համապատասխան տեղեկանքներ՝ նշելով պատճառները և հիմնավորումները (օր. միջոցառման գծով չհիմնավորված ծախսի նախատեսում, ոչ պարտադիր և շարունակական հայեցողական ծախսերի ընդգրկումը):
10. Հայտերի ամփոփում՝ միջոցառումների չափաքանակների վերաբերյալ \$Ն ձևավորում է դիրքորոշում և պատրաստում է Վարչապետի մոտ քննարկման փաթեթը (տեղեկանքներ, ֆայլեր, սլայդեր): Գործառնթացը առավել մանրամասն նկարագրված է ԲՄ14-ում:
11. ՀՀ Վարչապետի մոտ քննարկումից հետո ԲԳԿ մարմինների կողմից ստացվում է լրամշակված հայտերը, իսկ Վարչապետի աշխատակազմից՝ Վարչապետի մոտ քննարկումների արդյունքի արձանագրությունները:
12. Ստուգվում և համադրվում են լրամշակված հայտերում ՀՀ վարչապետի մոտ ՄԺԾՃ չափաքանակների քննարկումների արձանագրություններով նախատեսված մոտեցումների և հանձնարարականների պահանջներին համապատասխանելը, խնդիրների առկայության դեպքում պատրաստվում է համապատասխան տեղեկանքներ լրացուցիչ քննարկման համար, իսկ խնդիրների բացակայության դեպքում՝ իրականացվում է ՄԺԾՃ փաստաթղթում արտացոլվող տեղեկատվության պատրաստում:


- LS Budget-ում մուտքագրվում է ՄԺԾՃ չափաքանակները (Վարչապետի մոտ քննարկումների արձանագրություններին համապատասխանող): Ծրագրում Ֆինանսավորում բաժնից բացում ենք պլանավորում մասը, մտնում ենք Մուտքի ֆորմա 1, ընտրում ենք գերատեսչություն(ԲԳԿ), Գերատեսչություն կատարող(ԲՍԿ), խումբ (գործառական դասակարգում), ծրագիր (համակարգչային կող, համապատասխանում է գանձապետարանի ծրագրային կողի հետ): Բացված պատուհանում ընտրում ենք համապատասխան տնտեսագիտական հոդվածը և մուտքագրում թիվը և հաստատում:
- LS Budget համակարգ է ներմուծվում սահմանված ձևանմուշին համապատասխան փաստաթուղթը՝ միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշները: Բացված պատուհանում “ներմուծում DOC 3” (համապատասխանում է մեթոդական ցուցումների հավելված 3-ի մաս 4-ին) կոճակի օգնությամբ փաստաթուղթը ներբեռնվում է համակարգ:
- LS Budget համակարգ է ներմուծվում սահմանված ձևանմուշին համապատասխան փաստաթուղթը պետական բյուջեի ծախսային ծրագրերի գծով վերջնական արդյունքի ցուցանիշները: Բացված պատուհանում “ներմուծում APP3” (համապատասխանում է մեթոդական ցուցումների հավելված 3-ի մաս 3-ին) կոճակի օգնությամբ փաստաթուղթը ներբեռնվում է համակարգ:

Մուտքագրվող տվյալներ

ԲՄ11-1/Մ - Պարտադիր և հայեցողական ծախսեր (ծախսային մեթոդական ցուցումներ, մաս 4.1)

Տվյալ	Նկարագրություն
Ծրագրի անվանում/դասիչ	տեղեկատու
Միջոցառման անվանում/դասիչ	տեղեկատու
Ծախսի տեսակը	տեղեկատու(պարտադիր, հայեցողական՝ շարունակական և շարունակական)
Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	տեքստային
Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	տեքստային՝ լրացվում է միայն պարտադիր ժամանա
Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը	տեքստային

	սահմանող օրենսդրական հիմքերը	
	ԲՄ11-2/Մ Տեղեկատվություն LS Finance համակարգից, Տե ս այ ս տե ղ	
	Տվյալ	Նկարագրություն
ԲԳԿ		տեղեկատու/գանձապետական կող/
Ծրագրի կող/անվանում		տեղեկատու
Միջոցառման կող/անվանում		տեղեկատու
Տնտեսագիտական դասակարգիչ		տեղեկատու/ներկայացված է ճանիչ տարբերակով/
Տարեկան պալ		թվային
Տարեկան ճշտված պլան		թվային
Փաստ		թվային
Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ		թվային
Ելքագրվող տվյալներ	Գործընթաց ԲՄ13-ի ելքային տվյալներ (ՄԺԾԾ հավելվածներ)	
Վալիդացիա	Ստացված հայտերի տվյալները համադրվում են Վարչապետի մոտ քննարկումների արդյունքում արձանագրությունների տվյալների հետ:	



Ստորաբաժանում	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն
Անվանում	ԲՄ12-Նոր նախաձեռնություններ
Նպատակ	Նոր նախաձեռնությունների հաստատում
Տիրույթ	ՀՀ \$Ն, ԲԳԿ-ներ
Դերակատարներ	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն
Ընթացք	<ol style="list-style-type: none"> 1. ԲԳԿ մարմինները (հայտատու մարմիններ) Mullbery համակարգի միջոցով բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն են ներկայացնում ՄԺԾՃ հայտերը՝ մեթոդական ցուցումներով սահմանված ձևանմուշներին և ժամկետներին համապատասխան (պարտադիր և շարունակական հայեցողական ծախսերի մասով՝ մինչև ընթացիկ տարվա մարտի 1-ը /առանց նոր նախաձեռնությունների/, իսկ հայեցողական ծախսերի և նոր նախաձեռնությունների մասով՝ մինչև մարտի 15-ը) և առաջնորդվելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված նախնական չափաքանակներով(Գործընթացը մանրամասն նկարագրված է Բ1-ում): 2. Ստուգվում է ներկայացված նոր նախաձեռնությունների հայտի համապատասխանությունը մեթոդական ցուցումներով պահանջվող ձևաչափերին: 3. Որոշվում է նոր նախաձեռնության ծախսերի հիմքում դրված պարտավորության բնույթը (պարտադիր թե՛ հայեցողական)՝ հիմք ընդունելով օրենսդրական հիմքը: 4. Ստուգվում է նոր նախաձեռնության հաշվարկ հիմնավորման առակայությունը (ՊՈԱԿ-ների դեպքում սահմանված ձևաչափին համապատասխան, իսկ այլ ծառայությունների ձեռք բերման մասով կարող է լինել ազատ ձևաչափի xls): 5. Վարչապետի մոտ քննարկաման համար տրամադրվում է նաև նոր նախաձեռնությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը՝ նշելով ռազմավարության ծրագրերի հետ կապը, իրավական կարգավորումները, և ծախսի չափի վերաբերյալ ՀՀ \$Ն առաջարկությունները: 6. Վարչապետի մոտ քննարկումներից հետո ստացված արձանագրությունների հիման վրա, նոր նախաձեռնությունների ընդունման դեպքում, ըստ անհրաժեշտության, ԲԳԿ-ի հետ ճշտվում է ծրագիրը, որի շրջանակում պետք է իրականացվի միջոցառումը՝ հիմք ընդունելով միջոցառման նպատակը և վերջնական արդյունքը:

	<p>7. Նոր նախաձեռնության չընդունման մասին ԲԳԿ-ն տեղեկանում է Վարչապետի մոտ քննարկումների արդյունքներում կազմված արձանագրություններից:</p> <p>8. Հայտերի ամփոփում՝ ՀՀ պետական բյուջեում ներառվող պարտադիր և շարունակական հայեցողական ծախսերին դասվող միջոցառումների մասով կազմվում է բյուջեում արտացոլվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների ներքին օգտագործման համար մշակված համապատասխան xls ֆայլը (Doc1):</p> <p>9. Նոր միջոցառում(ճԲ ծրագիր) LS Budget մուտքագրելու համար տեղեկատուներով նայում ենք հերթական ազատ համար, այնուհետև Տեղեկատուներ-միջոցառումներ բաժնում տեղադրվում է նոր միջոցառումը իր հերթական համարով, անվանումով և նկարագրությամբ: Այնուհետև միջոցառման նույն անվանումով ավեացնում ենք նույն բաժնի ծրագրեր (Գործառնական) տեղեկատու: LS Budget ծրագրում նշելով նոր միջոցառման խումբը/բաժին/դաս-ծրագիր(գործառնական)-ԲԳԿ-ԲՍԿ-ՃԲ ծրագիր-միջոցառում, ստեղծում ենք փոխկապակցում (զանձապետական հաշվեհամար):</p> <p>10. Իրականացվում է ՄԺԾԾ փաստաթղթում արտացոլվող տեղեկատվության պատրաստում՝</p> <ul style="list-style-type: none"> • LS Budget-ում մուտքագրվում է ՄԺԾԾ չափաքանակները (Վարչապետի մոտ քննարկումների արձանագրություններին համապատասխանող): Ծրագրում ֆինանսավորում բաժնից բացում ենք պլանավորում մասը, մտնում ենք Մուտքի ֆորմա 1, ընտրում ենք գերատեսչություն(ԲԳԿ), Գերատեսչություն կատարող(ԲՍԿ), խումբ (գործառնական դասակարգում), ծրագիր (համակարգչային կող, համապատասխանում է զանձապետարանի ծրագրային կողի հետ): Բացված պատուհանում ընտրում ենք համապատասխան տնտեսագիտական հոդվածը և մուտքագրում թիվը և հաստատում: • LS Budget համակարգ է ներմուծվում սահմանված ձևանմուշին համապատասխան փաստաթուղթը՝ միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշները: Բացված պատուհանում "ներմուծում DOC 3" (համապատասխանում է մեթոդական ցուցումների հավելված 3-ի մաս 4-ին) կոճակի օգնությամբ փաստաթուղթը ներբեռնվում է համակարգ: • LS Budget համակարգ է ներմուծվում սահմանված ձևանմուշին համապատասխան փաստաթուղթը պետական բյուջեի ծախսային ծրագրերի գծով վերջնական արդյունքի ցուցանիշները: Բացված պատուհանում "ներմուծում APP3" (համապատասխանում է մեթոդական ցուցումների հավելված 3-ի մաս 3-ին) կոճակի օգնությամբ փաստաթուղթը ներբեռնվում է համակարգ: 		
<p>Մուտքագրվող տվյալներ</p>	<p>ԲՄ12-1/Մ=ԲՄ1-1.2/Ե</p> <p>ԲՄ12-2/Մ=ԲՄ1-1.2/Ե Հավելված 2-Նոր նախաձեռնությունների ներկայացման ձևաչափ</p> <table border="1" data-bbox="501 1342 2141 1404"> <tr> <td data-bbox="501 1342 1375 1404">Տվյալ</td> <td data-bbox="1375 1342 2141 1404">Նկարագրություն</td> </tr> </table>	Տվյալ	Նկարագրություն
Տվյալ	Նկարագրություն		

Պետական մարմնի անվանումը	տեղեկատու	
Նոր նախաձեռնությանն առնչվող այլ պետական մարմինների անվանումները	տեղեկատու/բազմակի կցման հնարավորությամբ/	
Ճրագրի անվանումը/դասիչը	տեղեկատու	
Նոր ծրագիր (հիմնավորումներ և բացատրություններ)	այո կամ ոչ	
Ճրագրի ակնկալվող ավարտը	ժամկետ	
Միջոցառման անվանումը/դասիչ	տեղեկատու	
Միջոցառման (պետության միջամտության) տեսակը	տեղեկատու	
Նոր միջոցառում (հիմնավորումներ և բացատրություններ)	այո կամ ոչ, տեքստային դաշտ	
Գոյություն ունեցող միջոցառման ընդլայնում (հիմնավորումներ և բացատրություններ)	այո կամ ոչ, տեքստային դաշտ	
Նոր նախաձեռնության ծախսերի հիմքում դրված պարտավորության բնույթը	բացվող ցանկ	
Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	տեքստային դաշտ	
Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	տեքստային դաշտ	
Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը	տեքստային դաշտ	

Նպատակը	տեքստային դաշտ	
Նոր նախաձեռնության առնչությունը միջուկորտային(խաչվող) բնույթի քաղաքականության նպատակների հետ	բացվող ցանկ	
Նկարագրությունը	տեքստային դաշտ	
Սպասվող օգուտները	տեքստային դաշտ	
Նոր նախաձեռնությունը չֆինանսավորելու դեպքում ծագող խնդիրները	տեքստային դաշտ	
Արդյունքային չափորոշիչները	տեքստային դաշտ	
Չափի միավորը	տեղեկատու	
Տարեթվեր	թվային, 3 տարվա բացվածք/2023,2024,2025/	
Միջոցառման ավարտի տարեթիվը	թվային	
Պահանջվող ռեսուրսները	տեքստային	
Տարեթվեր	թվային, 3 տարվա բացվածք/2023,2024,2025/	
Միջոցառման ավարտի տարեթիվը	թվային	
Ֆինանսավորման աղբյուրը	բացվող ցանկ	
Տարեթվեր	թվային, 3 տարվա բացվածք/2023,2024,2025/	
Միջոցառման ավարտի տարեթիվը	թվային	
Արդյունքների այլ մակարդակներ արտահայտող այլընտրանքներ	տեքստային	

Նոր նախաձեռնության իրականացման այլ եղանակներ արտահայտող այլընտրանքներ	տեքստային
Այլ անհրաժեշտ տեղեկատվություն և հիմնավորումներ	տեքստային




ԲՄ12-3/Մ=ԲՄ1-1.6/Ե, ԲՄ1-1.6.1/Ե

ԲՄ12-4/Մ = ԲՄ1-1.6/Ե Հավելված 6 **Նոր նախաձեռնությունների ֆինանսավորման աղբյուրները (ամփոփ)**

Տվյալ	Նկարագրություն
1. Նոր նախաձեռնությունների գծով ընդհանուր ծախսերը	թվային` ներկայացվում է 3 տարվա կտրվածքով /2023-2025/
2. Նոր նախաձեռնությունների ֆինանսավորման այլ աղբյուրներ	հանրագումար (տող 3 +տող 4)
3. Այլ աղբյուրներից ակնկալվող ֆինանսավորում	թվային` ներկայացվում է 3 տարվա կտրվածքով /2023-2025/
4. Այլ ծրագրերից ակնկալվող ծախսային խնայողություններ	թվային` ներկայացվում է 3 տարվա կտրվածքով /2023-2025/
Նոր նախաձեռնությունների գուտ ազդեցությունը պետական բյուջեի վրա (ընդհանուր ծախս` հանած եկամտի այլընտրանքային աղբյուրներ և/կամ այլ ծրագրերից խնայողություններ)	տարբերություն (տող 1-տող 2)

ԲՄ12-5/Մ=ԲՄ1-1.6.1/Ե Հավելված 6.1 **Բյուջետային ծրագրերի/միջոցառումների ֆինանսավորման առաջնահերթությունները**

	Տվյալ	Նկարագրություն
	Ծրագրի անվանում/դասիչ	տեղեկատու
	Միջոցառման անվանում/դասիչ	տեղեկատու
	Գոյություն ունեցող ծրագրեր/միջոցառումներ	թվային` ներկայացվում է 3 տարվա կտրվածքով /2023-2025/
	Նոր նախաձեռնություններ	թվային` ներկայացվում է 3 տարվա կտրվածքով /2023-2025/
	Ծրագրի/միջոցառման գործունեության սկիզբը	տարեթիվ
	Ծրագրի/միջոցառման նախատեսվող ավարտը	տարեթիվ
<p>ԲՄ12-6/Մ => ԲՄ10-5/Մ ՊՈԱԿ-ի ծախսակազմի անաչափ</p>		
Ելքագրվող տվյալներ	ԲՄ12/Ե- համապատասխանում է ԲՄ13-1/Ե-ԲՄ13-6/Ե ելքային տվյալներին:	
Վալիդացիա	Իրականացվում է հիմնավորումների և թվային տվյալների ստուգում:	



Ստորաբաժանում	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն
Անվանում	ԲՄ13-ՄԺԾԾ հավելվածների ձևավորում
Նպատակ	ՄԺԾԾ հավելվածներ
Տիրույթ	ՀՀ \$Ն
Դերակատարներ	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն,
Ընթացք	<p>1. Վարչապետի մոտ քննարկումներից հետո վերջնական հաստատված չափաքանակները (Վարչապետի մոտ քննարկումների արձանագրություններին համապատասխանող) LS Budget համակարգ ներմուծվում է հատուկ ձևաչափի xls ֆայլի միջոցով, որտեղ մուտքագրվում է միջոցառումների խումբը/բաժին/դաս-ծրագիր(գործառնական)-ԲԳԿ-ԲՍԿ, տնտեսագիտական հոդվածը ներկայացված 3 տարվա կտրվածքով կամ աշխատակցի կողմից մուտք է արվում համակարգ: Ծրագրում ֆինանսավորում բաժնից բացում ենք պլանավորում մասը, մտնում ենք Մուտքի ֆորմա 1, ընտրում ենք գերատեսչություն(ԲԳԿ), Գերատեսչություն կատարող(ԲՍԿ), խումբ (գործառնական դասակարգում), ծրագիր (համակարգչային կող, համապատասխանում է գանձապետարանի ծրագրային կողի հետ): Բացված պատուհանում ընտրում ենք համապատասխան տնտեսագիտական հոդվածը և մուտքագրում թիվը և հաստատում:</p> <p>2. ՄԺԾԾ գործընթացը ամփոփվում է վարչության աշխատանքային xls ֆայլի (Doc1)-ում, որը լրացվում է բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության աշխատակիցների կողմից՝ հիմք ընդունելով ստացված հայտերի տվյալները:</p> <p>3. LS Budget հաշվետվությունների միջոցով ստանում ենք տարբեր հաշվետվություններ, որոնց միջոցով ստուգում ենք աշխատանքային (Doc1) ֆայլի տվյալների համապատասխանությունը ծրագրի հետ: Հիմնական ստուգման ուղենիշը լինում է ֆայլում ԲԳԿ-ի հատկացված գումարի և ծրագրում ներմուծված ըստ ԲԳԿ-ի հաշվետվության հետ: Անհամապատասխանության դեպքում ճշգրտումը կատարվում է ծրագրի մակարդակով, այնուհետև միջոցառման:</p> <p>4. Համակարգ ներմուծված վերջնական տեղեկատվության հիման վրա ստացվում են ՄԺԾԾ հավելվածները, որոնք ձևավորվում են LS Budget-ի հաշվետվությունների միջոցով: Մասնավորապես՝</p> <p>Հավելված 1 - Հայաստանի Հանրապետության պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերն՝ ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և ըստ բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների-ԾԲ ծրագրի անվանումը, նպատակը և վերջնական արդյունքի նկարագրությունը-հավելվածում ձևավորվում է համակարգի տեղեկատուների (նշված դաշտերը նախապես լրացված են) բազայից, իսկ ֆինասական ցուցանիշները աշխատակիցների մուտքագրված թվերից:</p>

Հավելված 2 - Հայաստանի Հանրապետության պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված ծախսերն՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման - LS Budget ամփոփ տնտեսագիտական հաշվետվությունից, որը ստացվում է մուտքագրած տնտեսագիտական հոդվածներից: Հավելվածում արտացոլվում է միայն հիմնական հոդվածը (օր.՝ Աշխատանքի վարձատրություն, առանց հավելվածար, պարգևատրում և այլն): - ԾԲ ծրագրի ծրագրի անվանումը, նպատակը և վերջնական արդյունքի նկարագրությունը-հավելվածում ձևավորվում է համակարգի տեղեկատուների (նշված դաշտերը նախապես լրացված են) բազայից, իսկ ֆինասական ցուցանիշները աշխատակիցների մուտքագրված թվերից:

Հավելված 3 - Հայաստանի Հանրապետության պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված ծախսերն՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման- LS Budget-ի հաշվետվություններից՝ գործառնական դասակարգումը ըստ բաժինների՝ Բաժնի անվանումը և հերթական համարը ներմուծված է համակարգի տեղեկատուներում, իսկ թվային արժեքները մուտքագրված տվյալներից:

Առաջիկա տարի	<ol style="list-style-type: none"> 1. ԲԳԿ-ներից ստացված վերանայված հայտերը հաշվառվում են: Ստուգվում է ԲԳԿ-ների կողմից տրամադրված հայտերի առկայությունը, բացակայության դեպքում պահանջվում է ներկայացնել բացակայող հայտերը: 2. Իրականացվում է Բ6-1.1 ԲԳ-ի 2-10-րդ կետերում նշված գործողությունները (5-րդ կետի շրջանակներում կիրառվում է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված սեպտեմբերի 1-ի արտարժույթի փոխարժեքը): Վարկային ծրագրերի գծով կանխատեսումային ցուցանիշները կրկին տրամադրվում են պետական պարտքի կառավարման վարչություն, որից պետական պարտքի կառավարման վարչության կողմից բանավոր/աշխատանքային կարգով տրամադրվում է դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների՝ վարկերի ստացման գծով վարկային ծրագրերի ժամկետների, մնացորդի վերաբերյալ տեղեկատվություն՝ ավելի ճշգրիտ վերլուծություն և կանխատեսում անելու նպատակով: 3. Այնուհետև 6-րդ կետում նշված գործոններով և արտարժույթի կուրսի փոփոխություններով պայմանավորված (կուրսի փոփոխությունը կիրառվում է 2 անգամ՝ սեպտեմբերի 1-ի և օրենքն ընդունվելու ամսվա առաջին օրվա ԿԲ-ի կուրսը՝ սովորաբար նոյեմբերի 1-ը) իրականացվում է վարկային ծրագրերի կանխատեսումային ցուցանիշների ճշգրտում: 4. Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության աշխատակցի կողմից արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային ծրագրերի համապատասխան միջոցառումների գծով ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների ավարտուն տեսքի բերված տվյալները վերջնական ամփոփում է աշխատանքային ձև աղյուսակներում և մուտքագրում LS budget համակարգ: 5. LS BUDGET համակարգ միաժամանակ կարող են մուտքագրել բաժնի աշխատակիցը և արագության նպատակով ըստ ձև տարբերակով մշակված ձևանմուշներում արտացոլված տվյալների LSOFT-ի համապատասխան աշխատակիցը: ըստ ձև տարբերակով մշակված ձևանմուշներում արտացոլված տվյալների LSOFT-ի համապատասխան աշխատակիցը:

	<p>6. LS budget համակարգ ըստ ծրագրերի և միջոցառումների ներմուծվում է նաև ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ բաժնի աշխատակցի կողմից մշակված, վերջնական տեսքի բերված և ամփոփված մեթոդական ցուցումների հավելված 3-ի՝ Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափի մաս 4-ի՝ պետական մարմինների գծով արդյունքային(կատարողական ցուցանիշներ) ցուցանիշների համաձայն համապատասխան ձևաչափով (DOC3) xls/Arial AM(font) տարբերակի ֆայլերը:</p> <p>7. Վարկային ցուցանիշները ամբողջականացնելուց հետո կատարվում է պետական բյուջեի մասին օրենքում պետական բյուջեի վարկային ծրագրերին առնչվող հատվածների շարադրանքի մշակում, արյուսակների և գրաֆիկների ներկայացում:</p>

Մուտքագրվող տվյալներ	ԲՄ1 բիզնես գործընթացում նկարագրված էլքային տվյալ՝ ԲՄ1-1.11/Ե
Ելքագրվող տվյալներ	ԲԱ7-1/Ե - Պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի հավելված 1, արյուսակ 4, տե ս այ ս տե դ
Վալիդացիա	Բյուջեի հայտերով ներկայացված ծրագրով նախատեսված ամբողջ գումարի, սահմանված ժամանակահատվածի կատարողականների, նախորդ տարվա փաստի և հաշվետու տարվա սպասողականի մնացորդի համադրումը ներկայացված առաջիկա տարվա հայտերի գումարների հետ՝ էլնելով ծրագրի ավարտման ժամկետից:




Ստորաբաժանում	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն
Անվանում	ԲԱՑ- Առաջիկա տարվա պետական բյուջեի ենթավարկերի տրամադրում
Նպատակ	ՀՀ պետական բյուջեի ենթավարկային ծրագրերի գծով ծախսերի կանխատեսում
Տիրույթ	ՀՀ \$Ն, ԲԳԿ-ներ, վարչապետի աշխատակազմ
Դերակատարներ	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն/ ԲԳԿ /, մակրոտնտեսական քաղաքականության վարչություն/ ՄԲԿ /, պետական պարտքի կառավարման վարչություն/ ՊՊԿԿ /
Ընթացք	<p><i>Վարկային և դրամաշնորհային ծախսային ծրագրերից բացի նույն ընթացակարգով և մոտեցմամբ նաև ուսումնասիրվում և կանխատեսվում են ենթավարկային ծրագրերը, որոնք արտացոլվում են դեֆիցիտի հավելվածներում և հանդիսանում դեֆիցիտի միաժամանակ Արտաքին աղբյուրների (վարկերի ստացում) և Ներքին աղբյուրների (Վարկերի և փոխատվությունների տրամադրում) տարրերից: Ենթավարկային ծրագրերը դրանք ՀՀ կառավարության և դոնոր կազմակերպությունների միջև կնքված համաձայնագրերով վարկային ծրագրերն են, որոնք հետագայում ՀՀ ֆինանսների նախարարության և ծրագիր իրականացնող կազմակերպությունների միջև կնքված ենթավարկային պայմանագրերով ծրագրերն են:</i></p> <ol style="list-style-type: none"> 1. ԲԳԿ մարմինները (հայտատու մարմիններ) Mulberry համակարգի միջոցով բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն են ներկայացնում առաջիկա տարվա պետական բյուջեի արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային ենթավարկային ծրագրերի, բյուջետային հայտերը՝ մեթոդական ցուցումներով սահմանված ձևաչափերին և ժամկետների համապատասխան առաջիկա տարվա պետական բյուջեի բյուջետային լրամշակված հայտերը՝ մինչև ընթացիկ տարվա օգոստոս): 2. ԲԳԿ-ներից ստացված հայտերը հաշվառվում են աշխատանքային xls ֆայլերում: Ստուգվում է ԲԳԿ-ների կողմից տրամադրված հայտերի առկայությունը՝ մասնավորապես, հավելված 11-ը՝ “Արտաքին աղբյուրներից բյուջետային խողովակներով ստացվող վարկային միջոցների հաշվին իրականացվելիք ծրագրերի գծով. ամփոփ բյուջետային ֆինանսավորումը”: Բացակայության դեպքում պահանջվում է ներկայացնել բացակայող հայտերը: 3. Ստացված հայտերում ուսումնասիրվում և ստուգվում է մեթոդական ցուցումներով պահանջվող հավելվածների լրացման ամբողջականությունը: 4. Ստուգվում է ԲԳԿ մարմինների կողմից տրամադրված նպատակային ենթավարկային ծրագրերի հիմնավորվածությունը՝ հիմք ընդունելով օրենսդրական փոփոխությունները, կնքված պայմանագրերը և


համաձայնագրերը: Հայտնաբերված թերացումների դեպքում իրականացվում են քննարկումներ հայտատու մարմինների հետ, ինչի արդյունքում իրականացվում է հայտերի լրամշակում կամ լրացուցիչ հիմնավորումների և բացատրությունների ստացում ԲԳԿ-ների կողմից:

5. Հայտերի ամփոփում՝ հայտերը ըստ վարկային միջոցների և ՀՀ կառավարության համաֆինանսավորման տարանջատման ամփոփվում են աշխատանքային ֆայլում (xls ձևաչափով)՝ միաժամանակ կիրառելով ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված սեպտեմբերի 1-ի արտարժույթի փոխարժեքը:
6. Հայտերի ամփոփումից հետո իրականացվում է ենթավարկային ծրագրերի կանխատեսումները: Կանխատեսումները կատարվում են՝ հիմք ընդունելով նախորդ տարիների փաստացի ցուցանիշները, ինչպես նաև ընթացիկ տարվա կանխատեսումները, առկա և սպասվող օրենսդրական փոփոխությունները, կնքված սակայն ուժի մեջ չմտած համաձայնագրերը, կնքված և դեռևս կնքվելիք պայմանագրերը՝ հաշվի առնելով վերջիններիս ավարտման ժամկետները
7. ՀՀ ՖՆ նախարարի հրամանով (Առաջիկա տարվա բյուջետային գործընթացը սկսելու համար՝ ՀՀ ֆինանսների նախարարի «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի հունվարի 20-ի N 72-Ա որոշմամբ տրված հանձնարարականների կատարման ուղղությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունում իրականացվող աշխատանքների կատարման ժամանակացույցը հաստատելու մասին» 89-Ա հրաման սահմանված ժամանակացույցի համաձայն արտաքին վարկերի սպասարկման և մայր գումարի մարումների ծավալների գծով բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման համար ներգրավվելիք արտաքին վարկերի ծավալների կանխատեսումների տրամադրում պետական պարտքի կառավարման վարչությանը, որից հետո պետական պարտքի կառավարման վարչության կողմից բանավոր/աշխատանքային կարգով տրամադրվում է դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների՝ վարկերի ստացման և վարկերի և փոխատվությունների տրամադրման գծով ենթավարկային ծրագրերի ժամկետների, մնացորդի վերաբերյալ տեղեկատվություն՝ ավելի ճշգրիտ վերլուծություն և կանխատեսում անելու նպատակով:
8. ՄԺԾԾ ՀՀ Վարչապետի մոտ քննարկումներից հետո ենթավարկային ծրագրերի գծով առաջարկները վերագնահատվում են նոյեմբերի 1-ի փոխարժեքով (կուրսի փոխտիությունը կիրառվում է 2 անգամ՝ սեպտեմբերի 1-ի և օրենքն ընդունվելու ամսվա առաջին օրվա ԿԲ-ի կուրսը՝ սովորաբար նոյեմբերի 1-ը) և իրականացվում է ենթավարկային ծրագրերի կանխատեսումային ցուցանիշների վերջնական ճշգրտում:
9. Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության աշխատակցի կողմից արտաքին աղբյուրները ստացվող ենթավարկային ծրագրերի համապատասխան միջոցառումների գծով ֆինանսական ցուցանիշների ավարտուն տեսքի բերված տվյալները վերջնական ամփոփում է աշխատանքային xls աղյուսակներում և համապատասխան աշխատակցի կողմից մուտքագրվում LS budget համակարգ:

	10. LS budget համակարգ միաժամանակ կարող են մուտքագրել բաժնի աշխատակիցը և արագության նպատակով ըստ EXCEL տարբերակով մշակված ձևանմուշներում արտացոլված տվյալների LSOFT-ի համապատասխան աշխատակիցը:
Մուտքագրվող տվյալներ	ԲՄ1 բիզնես գործընթացում նկարագրված էլքային տվյալ՝ ԲՄ1-1.11/Ե, Բ2-1.11/Ե
Ելքագրվող տվյալներ	ԲԱ8/Ե - Պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները հավելված 3 աղյուսակ 3-1.1 և աղյուսակ 3-1.1.1, տե՛ս այ՛ս տե՛ղ
Վալիդացիա	Բյուջեի հայտերով ներկայացված ծրագրով նախատեսված ամբողջ գումարի և սահմանված ժամանակահատվածի կատարողականների մնացորդի համադրումը ներկայացված լրամշակված հայտերի գումարների հետ՝ ելնելով ծրագրի ավարտման ժամկետից:



ԲԱ8.1-Ենթապրոցես




Ստորաբաժանում	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն
Անվանում	ԲԱ9-Բյուջեի դեֆիցիտի հաշվեկշռում առաջիկա տարի
Նպատակ	Դեֆիցիտի հաշվեկշռում
Տիրույթ	ՀՀ \$Ն, ԲԳԿ
Դերակատարներ	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն /ԲԳԿ/, պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կատարման վարչություն, պետական պարտքի կառավարման վարչություն
Ընթացք	<ol style="list-style-type: none"> 1. Առաջիկա տարվա բյուջետային գործընթացի իրականացման համար ՀՀ \$Ն (պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կատարման վարչություն) և ԲԳԿ մարմինների (հայտատու մարմիններ) կողմից կողմից հաշվետու տարվա օգոստոս ամսվա ընթացքում Mulberry համակարգի միջոցով ստացվում են դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների՝ մուրհակների մարումների, տրամադրված վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքերի (Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կատարման վարչություն), արտաքին վարկերի ծավալների գծով (ԲԳԿ մարմիններ) լրամշակված հայտերը՝ ընթացիկ տարվա օգոստոսին: 2. Կատարվում է ստացված հայտերի ամփոփում և ստուգում: Անճշտությունների դեպքում՝ համագործակցելով հայտը տրամադրած վարչության համապատասխան աշխատակիցների հետ, կատարվում են ուղղումներ: 3. Իրականացվում է տրամադրված վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքերի և Արցախի Հանրապետությանը տրամադրվելիք միջպետական վարկի գումարների հաշվարկ: 4. Mulberry համակարգի միջոցով առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի հիմքում դրվող մուրհակների մարումների, տրամադրված վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքերի, Արցախի Հանրապետությանը տրամադրվելիք միջպետական վարկի, վարկերի և փոխատվությունների տրամադրումից մուտքերի, ինչպես նաև արտաքին վարկերի ծավալների կանխատեսումները տրամադրվում են պետական պարտքի կառավարման վարչությանը: 5. Mulberry համակարգի միջոցով ստացվում են առաջիկա տարվա պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների՝ պետական կարճաժամկետ պարտատոմսերի, գանձապետական պարտատոմսերից զուտ ֆինանսավորման, ելքերի ֆինանսավորմանն ուղղվող պետական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցների, կայունացման դեպոզիտային հաշվի համալրման և օգտագործման, ստացված վարկերի և

փոխատվությունների մարման, Վրաստանին տրամադրված վարկի վերադարձի, միջազգային ֆինանսական կազմակերպությունների կապիտալում մասնակցության գծով ստանձնած պարտավորությունների կատարման կանխատեսումները պետական պարտքի կառավարման վարչությունից:

6. Ստացված տեղեկատվության հիման վրա իրականացվում է պետական բյուջեի դեֆիցիտի հաշվեկշռում՝ ըստ պետական կարճաժամկետ պարտատոմսերի, գանձապետական պարտատոմսերից զուտ ֆինանսավորման, մուրհակների մարումներից մուտքերի, վարկերի և փոխատվությունների տրամադրման, տրամադրված վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքերի, ելքերի ֆինանսավորմանն ուղղվող պետական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցների, կայունացման դեպոզիտային հաշվի համալրման և օգտագործման, վարկերի և փոխատվությունների ստացման, ստացված վարկերի և փոխատվությունների մարման, Վրաստանին տրամադրված վարկի վերադարձից մուտքերի, միջազգային ֆինանսական կազմակերպությունների կապիտալում մասնակցության գծով ստանձնած պարտավորությունների կատարման:
7. Մշակվում է պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների՝ ըստ առանձին տարրերի հավելված N 3ը (xls ձևաչափով):
8. Իրականացվում է առաջիկա տարվա պետական բյուջեի օրենքի նախագծի մշակում՝ դեֆիցիտին վերաբերող տեքստային մասի մշակում և համապատասխան հավելվածի N 3 առկայություն:
9. Առաջիկա տարվա պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը ներկայացվում է ՀՀ ԱԺ՝ քննարկումների:
10. Առաջիկա տարվա պետական բյուջեի օրենքի նախագծի՝ ՀՀ ԱԺ-ում քննարկումների արդյունքում իրականացվում է դեֆիցիտի ցուցանիշների վերազնահատում՝ կախված արտարժույթի սեպտեմբերի 1-ի կուրսի փոփոխությամբ և այլ փոփոխություններով:
11. Մուրհակների մարումների, տրամադրված վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքերի, վարկերի և փոխատվությունների տրամադրումից մուտքերի, Արցախի Հանրապետությանը տրամադրվելիք միջպետական վարկի, ինչպես նաև արտաքին վարկերի ծավալների վերազնահատված ցուցանիշները Mulberry համակարգի միջոցով տրամադրվում են պետական պարտքի կառավարման վարչությանը:
12. Mulberry համակարգի միջոցով պետական պարտքի կառավարման վարչությունից ստացվում են դեֆիցիտի ֆինանսավորման՝ 5-րդ կետում նշված աղբյուրների վերազնահատված վերջնական կանխատեսումները:
13. Ստացված տեղեկատվության հիման վրա իրականացվում է պետական բյուջեի դեֆիցիտի հաշվեկշռում՝ 6-րդ կետում նշված տարրերով:

	<p>14. Լրամշակվում է պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների՝ ըստ առանձին տարրերի N 3 հավելվածը (xls ձևաչափով):</p> <p>15. Իրականացվում է առաջիկա տարվա պետական բյուջեի օրենքի նախագծի վերջնականացում՝ դեֆիցիտին վերաբերող տեքստային մասի մշակում և համապատասխան N 3 հավելվածի առկայություն:</p> <p>16. Ամփոփված ցուցանիշների մուտքագրում LS Budget համակարգ:</p>
<p>Մուտքագրվող տվյալներ</p>	<p>ԲԱ9-1/Մ - Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կատարման վարչության հայտ, մուրհակների մարումներ - տե ս այ ս տե դ</p> <p>ԲԱ9-2/Մ - Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կատարման վարչության հայտ, տրամադրված վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքեր - տե ս այ ս տե դ</p> <p>ԲԱ9-3/Մ - հավելված 9 և 11=ԲՄ1-1.9/Ե և ԲՄ1-1.11/Ե</p> <p>ԲԱ9-4/Մ - Պետական պարտքի վարչության հայտ - տե ս այ ս տե դ</p>
<p>Ելքագրվող տվյալներ</p>	<p>ԲԱ9-1/Ե - Առաջիկա տարվա պետակաբ բյուջեի մասին օրենք՝ տեքստային շարադրանք, տե ս այ ս տե դ,</p> <p>ԲԱ9-2/Ե - ՊԲ օրենքի Յավելված N 3 դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ, տե ս այ ս տե դ,</p> <p>ԲԱ9-3/Ե - Ուղերձ-բացատրագիր՝ տեքստային շարադրանք, տե ս այ ս տե դ</p>
<p>Վալիդացիա</p>	<p>ԲԱ9-4/Մ տվյալներից առանձնացվում են միայն իրատեսական տվյալները՝ հետագա վերլուծություններ իրականացնելու համար: Իրականացվում են թվաքանակային ստուգումներ:</p>



Ստորաբաժանում	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն
Անվանում	ԲԱ10-Առաջիկա տարվա վերանայված հայտերի ստացում և հաստատում
Նպատակ	ՀՀ պետական բյուջեի առաջիկա տարվա ծախսերի կանխատեսում
Տիրույթ	ՀՀ \$Ն, ԲԳԿ-ներ
Դերակատարներ	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն
Ընթացք	<p>Առաջիկա տարվա պետական բյուջեի մասին օրենքի նախագծի նախնական տարբերակում ներկայացված բյուջետային ծրագրերի շուրջ ՀՀ ԱԺ գլխադասային հանձնաժողովներում իրականացվում են քննարկումներ: Բյուջեի նախագծի նախնական տարբերակում ներկայացված բյուջետային ծրագրերի վերաբերյալ ԱԺ պատգամավորները ներկայացնում են առաջարկություններ:</p> <ol style="list-style-type: none"> 1. ԲԳԿ մարմինները (հայտատու մարմիններ) Mulberry համակարգի միջոցով բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն են ներկայացնում առաջիկա տարվա վերանայված հայտերը (վերանայված բաղադրիչների մասով)՝ հաշվի առնելով ՄԺԾԾ հաստատումից հետո ընդունված իրավակարգավորումները, քաղաքական հանձնառությունները, ինչպես նաև ՀՀ ԱԺ գլխադասային հանձնաժողովներից ստացված՝ ԱԺ պատգամավորների առաջարկությունները՝ արդյունքային ցուցանիշների մասով: 2. Իրականացվում է ստացված հայտերում նշված տեղեկատվության ստուգում՝ համադրվում են հավելվածների առկայությունը, յուրաքանչյուր հավելվածի տեղեկատվությունը մեթոդական ցուցումների պահանջներին համապատասխան լրացված լինելը: Ստուգվում են ներկայցված հավելվածներում ընդգրկված ֆինանսական տվյալների հաշվարկ հիմնավորումները և իրականացվում է նոր նախաձեռնությունների գույքագրում: 3. Ստուգվում է միջոցառումը պետական բյուջեում նախատեսման համար բյուջետային հայտում նշված իրավական հիմքերի համապատասխանությունը (մասնավորապես միջազգային պայմանագրային պարտավորություն, օրենքի պահանջ, ՀՀ կառավարության որոշումից բխող և այլն): Հիմք ընդունելով նշվածը գնահատվում է միջոցառման պարտադիր կամ հայեցողական դիտարկելու հիմնավորվածությունը: 4. Վերանայված հայտով ներկայացված ծախսային ուղղությունների նկարագրերի (բացատրագրի մաս), նպատակների, թիրախների, արդյունքային ցուցանիշների ու ծրագրերի իրականացումից ակնկալվող վերջնական արդյունքները համադրվում են ՄԺԾԾ փաստաթղթով հաստատված և ՀՀ կառավարության որոշեցրած քաղաքականության (Կառավարության ծրագրի, ոլորտային ռազմավարությունների և այլ ակտեր) հետ,

փոփոխությունների պարագայում գնահատվում է հիմնավորվածությունը: Ամփոփ տվյալները համեմատվում են ընթացիկ տարվա հաստատված և ճշտված բյուջեի և նախորդ տարվա փաստացի ցուցանիշների հետ (առավել բացված ծախսերի մասը համադրվում է ծախսակազմումների աղյուսակներից), դիտարկվում է հայտատուից անկախ ծախսերի վրա ազդող գործոնները և, կատարվում են համապատասխան հաշվարկներ: Նոր նախաձեռնությունների դեպքում դիտարկվում է միջոցառումը ՀՀ պետական բյուջեում ներառելու նպատակահարմարությունը, առաջնահերթությունը որոշման համատեքստում միջոցառման նպատակների և թիրախների ապահովման այլընտրանքները, ստուգվում է հաշվարկների ճշտությունը և հիմնավորվածությունը:

5. Անհրաժեշտության դեպքում հայտատու մարմիններից պահանջվում է լրացուցիչ տեղեկատվություն՝ բանավոր կամ գրավոր կարգով, որից հետո իրականացվում է քաղաքականության լրամշակում և դիրքորոշման ձևավորում:
6. Բյուջեի նախագծի ամփոփ xls ֆայլում (DOC1 կամ MTF) լրացվում է միջոցառման նախատեսման իրավական հիմքը, պարտադիր հայեցողական լինելը, ծախսային քաղաքականությունը, ռազմավարության ամկայությունը:
7. Վերլուծվում է գոյություն ունեցող ծախսերի և նոր նախաձեռնությունների մասով ոչ ֆինանսական ցուցանիշները (հաշվի առնելով նաև գենդերային բյուջեի պահանջները) և համադրվում են ֆինանսական ցուցանիշների հետ (հաշվարկային ցուցանիշների), դիտարկվում են դրանց վրա ազդող գործոնները:
8. Բյուջետային հայտերի՝ գոյություն ունեցող ծախսերի և նոր նախաձեռնությունների մասով ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների անհամապատասխանության, չհիմնավորվածության բացահայտման դեպքում վերջիններիս արձանագրվում են ԲԳԿ ու ԲԳԿ չհանդիսացող կատարող մարմիններից լրացուցիչ տեղեկատվության ստացման համար (Էլեկտրոնային փոստով և հեռախոսով), կատարվում են լրացուցիչ հաշվարկներ:
9. Կազմվում է բացատրագրի տեքստը ոլորտներով՝ ըստ բյուջետային գլխավոր կարգադրիչների առաջիկա տարվա ծախսերի կանխատեսումներով:
10. Կազմվում է ոլորտների գծով միջոցառումների գումարների կանխատեսումների \$Ն առաջարկների աշխատանքային աղյուսակ և մուտքագրվում LS budget:
11. Կազմվում է ոլորտների գծով միջոցառումների արդյունքային ցուցանիշների աղյուսակի (Doc 3) և համապատասխան ֆայլերը ներմուծվում են LS budget համակարգ:
12. Կամվում է վերջնական արդյունքի ցուցանիշների (APP) ամփոփ աղյուսակ համապատասխան ֆայլերը ներմուծվում են LS budget համակարգ:
13. LS budget մուտքագրված տվյալների հիման վրա կազմվում է բյուջետային նախագծի նախնական տարբերակը:
14. Առաջիկա տարվա պետական բյուջեի նախագիծը մշակվում և ներկայացվում է Կառավարությանը՝ հաստատման:

* Հաստատելուց հետո օրենքի նախագիծը ՀՀ Վարչապետի աշխատակազմը ներկայացնում է ԱԺ: ԱԺ առաջին և երկրորդ ընտրումների ընթացքում անհրաժեշտության դեպքում կատարվում են օրենքի նախագծի լրամշակումներ և փոփոխություններ (որը արտացոլվում է համապատասխան հավելվածներում):

** ՀՀ \$Ն կողմից տրամադրված ձևաչափի համաձայն ՀՀ հանրային իշխանության մարմինները, յուրաքանչյուրը իր ոլորտի մասով, ներկայացնում են նաև առաջիկա տարվա “Քաղաքացու Բյուջեն”, որը մշակվելուց հետո նույնպես հրապարակվում է ՀՀ \$Ն կայքում:

*** LS Budget համակարգչային մասնագետը ՄԺԾԾ Ժամանակ մուտքագրված տվյալներից առանձնացնում է միայն առաջիկա տարվա տվյալները և թարմացնում բազան: Անհրաժեշտության դեպքում աշխատակիցները կատարում են տվյալների խմբագրում:

Մուտքագրվող տվյալներ

ԲՄ10-2/Մ Հավելված N 3 - Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ

Մաս 4 ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Տվյալ	Նկարագրություն
Ծրագրի անվանում/դասիչ	տեղեկատու
Միջոցառման անվանում/դասիչ	տեղեկատու
Նկարագրություն	տեքստային
Միջոցառման տեսակ	տեղեկատու
Միջոցառումն իրականացնողի անվանումը	տեղեկատու
Լրացնել արդյունքի չափորոշիչի տեսակը	տեքստային դաշտ
Ցուցանիշներ	թվային` ներկայացվում է 5 տարվա կտրվածքով /2025/
Լրացնել միջոցառման ավարտի տարեթիվը	տարեթիվ
Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)	թվային

ԲՄ10-3/Մ Հավելված N 3 - Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ

Մաս 3. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՏՈՎ ԿԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ


Տվյալ	Նկարագուրում
Նպատակը	տեքստային դաշտ
Ծրագրի դասիչը և անվանումը	տեղեկատու
Չափորոշիչը	տեքստային դաշտ
Ելակետի ցուցանիշ	թվային
Ելակետի ժամկետ	տարեթիվ
Թիրախի ցուցանիշ	թվային
Թիրախի ժամկետ	տարեթիվ
Կապը ՀՀ կառավարության ծրագրով և ՀՀ գործող այլ ռազմավարական փաստաթղթերով սահմանված ՀՀ կառավարության քաղաքականության նպատակների և թիրախների հետ	տեքստային
Կապը ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների և ցուցանիշների հետ	տեքստային

Ելքագրվող տվյալներ


ԲԱ10-1/Ե - Գործընթաց ԲԱ12-ի ելքային տվյալներ, [տե՛ս այ՛ս տե՛ղ](#) :
 ԲԱ10-2/Ե - Քաղաքացու բյուջե, [տե՛ս այ՛ս տե՛ղ](#) :

Վալիդացիա

Ներկայացված հայտերը համադրվում են ՀՀ ԱԺ գլխադասային հանձնաժողովներից ստացված՝ ԱԺ պատգամավորների առաջարկությունների հետ: Իրականացվում են թվաբանական, իմաստաբանական, ինչպես նաև հիմնավորումների ստուգումներ:



ԲԱ10.1-Ենթապրոցես





Ստորաբաժանում	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն
Անվանում	ԲԱ11-Առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի հիմքում դրվող մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսման նպատակով պետական բյուջեի եկամտային մասի՝ պաշտոնական դրամաշնորհների կանխատեսումների իրականացում
Նպատակ	ՀՀ պետական բյուջեի եկամուտների կանխատեսում
Տիրույթ	ՀՀ \$Ն,ՀՀ վարչապետի աշխատակազմ
Դերակատարներ	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն, մակրոտնտեսական քաղաքականության վարչություն
	<p>Առաջիկա տարի</p> <ol style="list-style-type: none"> 1. Առաջիկա տարվա բյուջետային գործընթացի իրականացման համար, պետական բյուջեի եկամուտների կանխատեսումների վերազնահատման նպատակով, ՀՀ վարչապետի աշխատակազմից հաշվետու տարվա օգոստոս ամսվա ընթացքում ստացվում են թարմացված հայտ: 2. Իրականացվում է ՀՀ վարչապետի աշխատակազմից ստացված հայտի համաձայնագրերի առկայության ստուգում և հայտի ամփոփում՝ հայտում ներկայացված ցուցանիշները ամփոփվում են ներքին օգտագործման համար մշակված xls Ֆայլում: 3. Հայտի ամփոփումից հետո իրականացվում է ԵՄ բյուջետային աջակցության պաշտոնական դրամաշնորհների կանխատեսում, ինչի համար հիմք են ծառայում xls ձևաչափով ստացված հայտը և համաձայնագրերը: ԵՄ բյուջետային աջակցության պաշտոնական դրամաշնորհների կանխատեսման համար հայտով ներկայացված արտարժույթային գնահատականներն արտացոլվում են ՀՀ դրամով: Հաշվարկման համար հիմք են ծառայում տվյալ տարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ ԿԲ-ի սահմանած արտարժույթային կուրսերը: 4. ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով (առաջիկա տարվա բյուջետային գործընթացի համար՝ 89-Ա հրաման) սահմանված ժամանակացույցի համաձայն այլ եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների գծով վերազնահատված կանխատեսումները տրամադրվում են մակրոտնտեսական քաղաքականության վարչությանը՝ մակրոտնտեսական ցուցանիշների և հարկաբյուջետային շրջանակի վերազնահատման նպատակով: 5. Ժամանակացույցով սահմանված ժամկետներում մակրոտնտեսական քաղաքականության վարչությունը բյուջետային գործընթացի կազմակերպման վարչությանն է ներկայացնում առաջիկա տարվա պետական բյուջեի

	<p>հիմքում դրվող մակրոտնտեսական ցուցանիշների և հարկաբյուջետային շրջանակի վերաբերյալ վերագնահատված առաջարկը, որն էլ հիմք է հանդիսանում առաջիկա տարվա բյուջեի կազմման համար:</p>
--	--

Ընթացք

6. Առաջիկա տարվա պետական բյուջեի առաջարկը ՀՀ ԱԺ ներկայացնելուց հետո՝ տեղի է ունենում ԵՄ բյուջետային աջակցության դրամաշնորհների գծով կանխատեսումային ցուցանիշների ճշգրտում՝ պայմանավորված արտարժույթի կուրսի փոփոխությամբ (Նոյեմբերի 1-ի կուրս): Վերագնահատված առաջարկը կրկին տրամադրվում է մակրոտնտեսական քաղաքականության վարչությանը:
7. Մակրոտնտեսական քաղաքականության վարչությունից ստացվում է մակրոտնտեսական ցուցանիշների և հարկաբյուջետային շրջանակի վերաբերյալ վերջնական առաջարկը:
8. Հիմք ընդունելով ստացված վերջնական հարկաբյուջետային շրջանակը՝ իրականացվում է առաջիկա տարվա պետական բյուջեի մասին օրենքի աշխատանքների վերջնականացում՝ պետական բյուջեի մասին օրենքի տեքստային շարադրանքի և ուղերձ-բացատրագրի՝ ԵՄ բյուջետային աջակցության դրամաշնորհների առնչվող հավելվածի և տեքստային շարադրանքի մշակում:

Մուտքագրվող տվյալներ	ԲԱ11-1/Մ - տեղեկանքի ձևանմուշ, տե ս ալ ս տե դ
Ելքագրվող տվյալներ	ԲԱ11-1/Ե - Պետական բյուջի մասին օրենքում, տեքստային նկարագրություն- տե ս ալ ս տե դ , ԲԱ11-2/Ե - Բյուջետային ուղերձ-բացատրագրում Մաս III Ա- տե ս ալ ս տե դ , ԲԱ11-3/Ե - Բացատրագրի հավելվածներում Աղյուսակ 1- տե ս ալ ս տե դ
Վալիդացիա	Հայտերով ներկայացված դրամաշնորհների գծով նախորդ տարվա և ընթացիկ տարվա փաստացի ցուցանիշները համեմատվում են LS Finace համակարգում առկա համապատասխան տվյալների հետ:



Ստորաբաժանում	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն
Անվանում	ԲԱ12-առաջիկա տարվա հավելվածների ձևավորում
Նպատակ	ՊԲ օրենքի հավելվածների ստացում
Տիրույթ	ՀՀ \$Ն
Դերակատարներ	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն,
Ընթացք	<ol style="list-style-type: none"> 1. Քննարկումներից հետո վերջնական հաստատված չափաքանակները (Վարչապետի մոտ քննարկումների արձանագրություններին համապատասխանող) կամ LS Budget համակարգ ներմուծվում է հատուկ xls ձևաչափի միջոցով (Doc1), որտեղ ներկայացված առաջիկա տարվա բյուջեի օրենքի նախագծի տվյալներում, անհրաժեշտության դեպքում, կատարվում են ճշգրտումներ տարի բազայում, միջոցառումների, հոդվածների մասով (ավելացում, պակասեցում, արտարժույթի կուրսի փոփոխություն, այլ ճշգրտումներ) կամ կախված ճգրտումների քանակից աշխատակցից ինքն է տվյալները մուտքագրում համակարգ: 2. Ֆինանսական ցուցանիշները վերջնական ճշգրտելուց հետո աշխատակիցների կողմից լրացվում է հատուկ ձևաչափի xls ֆայլի(Doc3) և ներմուծվում LS Budget համակարգ: Հիմնական ստուգման ուղեկցիչը լինում է ֆայլում ԲԳԿ-ի հատկացված գումարի և ծրագրում ներմուծված ըստ ԲԳԿ-ի հաշվետվության հետ: Անհամապատասխանության դեպքում ճշգրտումը կատարվում է ծրագրի մակարդակով, այնուհետև միջոցառման: 3. Համակարգ ներմուծված վերջնական տեղեկատվության հիման վրա ձևավորվում են LS Budget-ի հաշվետվությունները, որոնցի ձևավորվում են հավելվածները, մասնավորապես` <ul style="list-style-type: none"> • «Հայաստանի Հանրապետության առաջիկա տարվա պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի հավելվածներ <p>Հավելված N1 աղյուսակ N1 Ամփոփ ըստ ծրագրերի-Առաջիկա տարվա պետական բյուջեի ծախսերն ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի - ԾԲ ծրագրի դասիչը և անվանումը ձևավորվում է համակարգի տեղեկատվության (նշված դաշտերը նախապես լրացված են) բազայից, իսկ ֆինանսական ցուցանիշները աշխատակիցների մուտքագրված թվերից:</p> <p>Հավելված N1 աղյուսակ N2 Ըստ ծրագրերի և միջոցառումների-Առաջիկա տարվա պետական բյուջեի ծախսերն ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների-ԲԳԿ անվանումը, ԾԲ ծրագրի դասիչը, անվանումը, նպատակը և վերջնական արդյունքի նկարագրությունը, միջոցառման դասիչը, անվանումը,</p>

նկարագրությունը, և ծառայության տեսակը -հավելվածում ձևավորվում է համակարգի տեղեկատուների (նշված դաշտերը նախապես լրացված են) բազայից, իսկ ֆինանսական ցուցանիշները աշխատակիցների մուտքագրված թվերից:

Հավելված N1 աղյուսակ N3 կապիտալ ծախսեր-Առաջիկա տարվա պետական բյուջեով նախատեսված ոչ ֆինանսական ակտիվների գծով բյուջետային ծախսերի բաշխումն ըստ բյուջետային գլխավոր կարգադրիչների, ծրագրերի, միջոցառումների և ուղղությունների (առանց օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված նպատակային վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրերի)- ԲԳԿ անվանումը, ԾԲ ծրագրի դասիչը, միջոցառման դասիչը, անվանումը արտահանվում է ծրագրից, այնուհետև աշխատատակիցները միջոցառման գծով ֆինանսական ցուցանիշները բացում են ըստ օբյեկտների(օրինակ, ՊՈԱԿ, ջրագիծ, ճանապարհ):

Հավելված N1 աղյուսակ N4 վարկային ծրագրեր-Օտարերկրյա պետությունների եվ միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի եվ միջոցառումների 2022 թվականի ծախսերի վերաբերյալ-ԲԳԿ անվանումը, ԾԲ ծրագրի դասիչը, անվանումը, միջոցառման դասիչը, անվանումը, նկարագրությունը, և տեսակը -հավելվածում ձևավորվում է համակարգի տեղեկատուներից, ֆինանսական ցուցանիշները աշխատակիցների մուտքագրված թվերից՝ տարանջատած ըստ վարկային միջոցների և համաֆինանսավորման:

Հավելված N1 աղյուսակ N5 դրամաշնորհային ծրագրեր-Օտարերկրյա պետությունների եվ միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի եվ միջոցառումների 2022 թվականի ծախսերի վերաբերյալ-ԲԳԿ անվանումը, ԾԲ ծրագրի դասիչը, անվանումը, միջոցառման դասիչը, անվանումը, նկարագրությունը, և տեսակը -հավելվածում ձևավորվում է համակարգի տեղեկատուներից, ֆինանսական ցուցանիշները աշխատակիցների մուտքագրված թվերից՝ տարանջատած ըստ դրամաշնորհային միջոցների և համաֆինանսավորման:

Հավելված N1 աղյուսակ N6 ճանապարհների ընթացիկ պահպանություն-Առաջիկա տարվա պետական բյուջեի հաշվին միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայությունների համար նախատեսվող ծախսերի բացվածքը-՝xIs \$այլը տրամադրվում է համապատասխան պատասխանատու աշխատակցի կողմից՝ հիմք ընդունելով ստացված հայտի տվյալները:

Հավելված N1 աղյուսակ N7 սուբվենցիաներ համայնքներին-Առաջիկա տարվա պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի N 1 հավելվածով ՀՀ համայնքներին (այդ թվում՝ Երևան համայնքին) տրամադրվող սուբվենցիաների բաշխումն ՝ ըստ բյուջետային գլխավոր կարգադրիչների, ծրագրերի, միջոցառումների և կատարողների-ԲԳԿ անվանումը, ԾԲ ծրագրի դասիչը, անվանումը, միջոցառման դասիչը, անվանումը, կատարողի անվանումը-հավելվածում ձևավորվում է համակարգի տեղեկատուներից, ֆինանսական ցուցանիշները ստացվում է առաջիկա տարվա բյուջեի բազայից:

Հավելված N1 աղյուսակ N8 սահմանամերձ-Առաջիկա տարվա պետական բյուջեով սահմանամերձ բնակավայրերի գծով նախատեսված ծախսերն ըստ ծրագրերի, միջոցառումների և կատարողների-՝xIs \$այլը տրամադրվում է համապատասխան պատասխանատու աշխատակցի կողմից՝ հիմք ընդունելով հայտի տվյալները:

Հավելված N2 Դոտացիա-Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներին «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով դոտացիաներ տրամադրելու և ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում

համայնքների 2020թ. բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման նպատակով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հատկացումների ընդհանուր ծավալի բաշխումն՝ ըստ առանձին համայնքների-Դոտացիայի ընդամենը թիվը հաշվարկվում է օրենքով սահմանված կարգով (նկարագրված է ԲԱ1 գծընթացում) և կորուստների թիվը՝ բաշխված ըստ համայնքների տրամադրվում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, որից ըստ համայնքների բաշխվածությունը ստացվում է նախարարության հայտի հետ և որպես հավելված ընդգրկվում բյուջեի օրենքի հավելվածում:

Հավելված N3 Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ՝ առանձնացված ըստ

Հավելված N3, Աղյուսակ N1-Առաջիկա տարվա պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներն՝ ըստ առանձին տարրերի-2.5 կետը բացվում է ըստ կատարողների, տրամադրվում է xis տարբերակով համապատասխան պատասխանատու աշխատակցի կողմից՝ հիմք ընդունելով հայտի տվյալները:

Հավելված N3, Աղյուսակ N1.1-Առաջիկա տարվա պետական բյուջեի ֆինանսական ակտիվների ձեռքբերումների և ներգրավված փոխառու միջոցների մարումների գծով ելքերն ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների՝ ըստ բյուջետային գլխավոր կարգադրիչների-ԲԳԿ անվանումը, ԾԲ ծրագրի դասիչը, անվանումը, նպատակը և վերջնական արդյունքի նկարագրությունը, միջոցառման դասիչը, անվանումը, նկարագրությունը, և միջոցառման տեսակը-հավելվածում ձևավորվում է համակարգի տեղեկատուների (նշված դաշտերը նախապես լրացված են) բազայից, իսկ ֆինանսական ցուցանիշները աշխատակիցների մուտքագրված թվերից:

Հավելված N3, Աղյուսակ N1.1.1-Օտարերկրյա պետությունների ել միջազգային կազմակերպությունների աջակցությամբ առաջիկա տարի իրականացվող վարկային ծրագրերի ել միջոցառումների շրջանակներում վարկերի տրամադրմանն ուղղվող միջոցներ-ԲԳԿ անվանումը, ԾԲ ծրագրի դասիչը, անվանումը, միջոցառման դասիչը, անվանումը, կատարողի անվանումը, տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումը հավելվածում ձևավորվում է համակարգի տեղեկատուներից, ֆինանսական ցուցանիշները աշխատակիցների մուտքագրված թվերից՝ տարանջատած ըստ վարկային միջոցների և համաֆինանսավորման:

Հավելված N3, Աղյուսակ N1.1.1.1-Բյուջետային վարկերի տրամադրմանն ուղղվող միջոցներ-տրամադրվում է xis տարբերակով համապատասխան պատասխանատու աշխատակցի կողմից՝ հիմք ընդունելով հայտի տվյալները:

Հավելված N4 ԿԲ վարչական ծախսեր- ՀՀ ԿԲ վարչական ծախսեր-տեղեկատվությունը ստացվում է ՀՀ ԿԲ-ի կողմից վարչական ծախսերի մասով՝ որը ենթակա է հաստատման և ներառվում է բյուջեի օրենքի հավելվածում:

Հավելված N5 Ռադիոհաճախականություն-առանձնացված ըստ

Հավելված N5, Աղյուսակ 1-Ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) պարտադիր վճարների առաջիկա տարվա համար սահմանված չափերը- տեղեկատվությունը ստացվում է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հայտի հետ և տեղադրվում հավելվածում:

Հավելված N5, Աղյուսակ 2-Ռադիոհաճախականության օգտագործման վճարների՝ առաջիկա տարվա համար սահմանված չափերը-տեղեկատվությունը ստացվում է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հայտի հետ և տեղադրվում հավելվածում:

Հավելված N6 Առաջնահերթություն-Առաջիկա տարվա ժամանակահատվածում առաջնահերթությունները՝ ըստ բյուջետային գլխավոր կարգադրիչների-նշված հավելվածը ներառում է այն ծրագրերը, որոնք համապատասխանում են կառավարության ծրագրային ռազմավարություններին, սակայն առկա ֆինանսական անբավարար միջոցների պատճառով ներառվում են առաջնահերթությունների հավելվածում: Doc1-ից առանձնացվում է առաջնահերթ միջոցառումների ցուցակը և պատրաստում են նշված հավելվածը:

Հավելված N7 Բնապահպանական վճարներ-«Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1133 ծրագրի 12001 միջոցառման շրջանակներում «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն համայնքների բնապահպանական ծրագրերի իրականացման համար Հայաստանի Հանրապետության համայնքներին տրամադրվող սուբվենցիաների բաշխումն ըստ համայնքների-ՊԵԿ և ՀՀ ճրջակա միջավայրի նախարարության կողմից տրամադրված տվյալների հիման վրա ստորաբաժանման համապատասխան աշխատակցի կողմից պատրաստվում է նշված հավելվածը:

- **ՀՀ կառավարության 2022 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր**

Հավելված-N1-Հավելված.Միջոցառումների.Տնտեսագիտակա.դաս-Առաջիկա տարվա պետական բյուջեի ծախսային ծրագրերի և միջոցառումների գծով ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման-ԲԳԿ անվանումը, ԾԲ ծրագրի դասիչը, անվանումը, միջոցառման դասիչը, անվանումը, կատարողի անվանումը, տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումը հավելվածում ձևավորվում է համակարգի տեղեկատուներից, ֆինանսական ցուցանիշները աշխատակիցների մուտքագրված թվերից:

Հավելված-N1.1-Հավելված.Միջոցառումների.Տնտեսագիտակա.դաս-Առաջիկա տարվա բյուջետային հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսատեսակները, ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման-Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները ձևավորվում է համակարգի տեղեկատուներից, ֆինանսական ցուցանիշները աշխատակիցների մուտքագրված թվերից:

Հավելված-N2-Հավելված.Գործառական.դասակարգման-Առաջիկա տարվա պետական բյուջեի ծախսային ծրագրերի և միջոցառումների գծով ծախսերն ըստ գործառական դասակարգման-Գործառական դասիչը(բաժին, խումբ, դաս), անվանումը, ԾԲ ծրագրի դասիչը, անվանումը, միջոցառման դասիչը, անվանումը, կատարողի անվանումը, ձևավորվում է համակարգի տեղեկատուներից, ֆինանսական ցուցանիշները աշխատակիցների մուտքագրված թվերից:

Հավելված-N3-Արդյունքային.ցուցանիշ.DOC3-Առաջիկա տարվա պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշները՝ ըստ ծրագրերի գլխավոր կարգադրիչների - Ձևաչափը լրացվում է ԲԳԿ-ների տրամադրված հայտով: (Համապատասխանում է մեթոդական ցուցումների հավելված 3 մաս 3-ին, որը ներմուծվում է ծրագիր համապատասխան ձևաչափով և արտահանվում:

Հավելված-N3.1-դեֆիցիտի.ելքային.ծրագրերի.արդյունքային-Առաջիկա տարվա պետական բյուջեի ֆինանսական ակտիվների ձեռքբերումների և ներգրավված փոխառու միջոցների մարումների գծով ելքերն ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների` ըստ արդյունքային ցուցանիշների-Ձևաչափը լրացվում է ԲԳԿ-ների տրամադրված հայտով: (Համապատասխանում է մեթոդական ցուցումների հավելված 3 մաս 3-ին, որը ներմուծվում է ծրագիր համապատասխան ձևաչափով և արտահանվում:

Աղյուսակ-N1-Եկամուտ-Պետական բյուջեների եկամուտների համեմատականը-ձև ֆայլը տրամադրվում է համապատասխան պատասխանատու աշխատակցի կողմից` հիմք ընդունելով ստացված հայտի տվյալները:

Աղյուսակներ NN 2, 2ա, առանձնացված ըստ

Աղյուսակ N 2-ՀՀ պետական մարմինների պահպանման ծախսերի համեմատությունը-ձև ֆայլը տրամադրվում է համապատասխան պատասխանատու աշխատակցի կողմից` հիմք ընդունելով ստացված հայտի տվյալները:

Աղյուսակ N 2ա-ՀՀ պետական մարմինների աշխատողների թվաքանակի վերաբերյալ-ձև ֆայլը տրամադրվում է համապատասխան պատասխանատու աշխատակցի կողմից` հիմք ընդունելով ստացված հայտի տվյալները:

Հավելված-N4-Վարկային ծրագիր-«Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում ընդգրկված օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի վերաբերյալ-վարկային ծրագրերի բացատրության տեքստային մասն է, որը տրամադրվում է համապատասխան պատասխանատու աշխատակցի կողմից` հիմք ընդունելով ստացված հայտի տվյալները:

Աղյուսակ-N7-Ճախսերի համեմատական-ՀՀ պետական բյուջեի նախորդ, ընթացիկ և առաջիկա տարիների բյուջետային ծախսերի համեմատություն-տեղեկատվությունը ստացվում է DOC1 ուղենիշային աշխատանքային ֆայլից

Աղյուսակ-N3-Պարտք տոկոսավճար.N 4.Պարտք.հիմնական, առանձնացված ըստ

Աղյուսակ-N3-ՀՀ կառավարության արտաքին պարտքի 2022-2024 թվականների սպասարկման ծախսերը (տոկոսավճարները) -տեղեկատվությունը ստացվում է պետական պարտքի վարչության կողմից:

Աղյուսակ-N4-ՀՀ կառավարության արտաքին պարտքի 2022-2024 թվականների հիմնական գումարի մարումները-տեղեկատվությունը ստացվում է պետական պարտքի վարչության կողմից:

Աղյուսակ-N5-Մասհանումներ N6.Պարտք, առանձնացված ըստ

Աղյուսակ-N5-ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով տոկոսադրույքները և մասհանումները 2020-2022թթ-տեղեկատվությունը ստացվում է պետական պարտքի վարչության կողմից:

Աղյուսակ-N6-ՀՀ կառավարության արտաքին պարտքը (առանց արտաքին երաշխիքների) 2020-2022թթ-տեղեկատվությունը ստացվում է պետական պարտքի վարչության կողմից:

Հավելված-N5.Սևան.լճի.տարեկան.ծրագիր-տարեկան հաստատված ծրագիր, որը որպես հավելված ընդգրկվում է բյուջեի բացատրագրում:

Հավելված-N6-Թմրամիջոց թմրամոլության պայքարի միջոց-տարեկան հաստատված ծրագիր, որը որպես հավելված ընդգրկվում է բյուջեի բացատրագրում:

Հավելված-N7-Առողջապահության նպատակային ծրագրեր -տարեկան հաստատված ծրագիր, որը որպես հավելված ընդգրկվում է բյուջեի բացատրագրում:

Հավելված-N7-Առողջապահության նպատակային ծրագրերի ցանկ-տարեկան հաստատված ծրագիր, որը որպես հավելված ընդգրկվում է բյուջեի բացատրագրում:

Հավելված-N8-Սպորտ տարեկան ծրագիր-տարեկան հաստատված ծրագիր, որը որպես հավելված ընդգրկվում է բյուջեի բացատրագրում:

Հավելված-N9-Զբաղվածության տարեկան ծրագիր-տարեկան հաստատված ծրագիր, որը որպես հավելված ընդգրկվում է բյուջեի բացատրագրում:

Հավելված-N10-Հաշմանդամություն ունեցող սոց.ներառման տարեկան ծրագիր-տարեկան հաստատված ծրագիր, որը որպես հավելված ընդգրկվում է բյուջեի բացատրագրում:

Հավելված-N11-Երեխա.իրավունքների պաշտ.տարեկան ծրագիր-տարեկան հաստատված ծրագիր, որը որպես հավելված ընդգրկվում է բյուջեի բացատրագրում:

Հավելված-N12-Գիտական գիատեխ.տարեկան ծրագրերի-տարեկան հաստատված ծրագիր, որը որպես հավելված ընդգրկվում է բյուջեի բացատրագրում:

Հավելված-N13-Ամփոփ.APP-Ձևաչափը լրացվում է ԲԳԿ-ների տրամադրված ճշգրտված հայտերի հիման վրա: (Համապատասխանում է մեթոդական ցուցումների հավելված 3 մաս 3-ին, որը ներմուծում ենք ծրագիր համապատասխան ձևաչափով և արտահանում:

Հավելված-N14-ԿԲ նախահաշիվ-տեքստային բացատրագիրը ստացվում է ՀՀ ԿԲ-ի կողմից վարչական ծախսերի մասով՝ որը ենթակա է հաստատման և ներառվում է բյուջեի ուղերձ բացատրագրում:

Հավելված-N15-Գենդերային զգայուն բյուջեի արդյունքային ցուցանիշներ-DOC3-ում տարանջատվում է գենդերային ցուցանիշներ ունեցող միջոցառումները, ձևանմուշը մուտքագրվում է LS Budget համակարգ և արտահանվում է:

ԲԱ12-1/Մ - Doc 1 - փաստաթուղթը մանրամասն նկարագրված է ԲՄ10 գործընթացի ԲՄ10-1/Ե ելքային տվյալներում

ԲԱ12-2/Մ - Համակարգ ներմուծման ձևաչափ-տե ս այ ս տե դ

Տվյալ	Նկարագրություն
Գործառական դասակարգիչ	տեղեկատու
ԲԳԿ	տեղեկատու
ԲՄԿ	տեղեկատու

Տնտեսագիտական հոդված	տեղեկատու
Նախորդ տարի	թվային
Ընթացիկ տարի	թվային
Առաջիկա տարի	թվային

ԲԱ12-3/Մ=ԲՄ10-2/Մ Հավելված N 3, մաս 4

ԲԱ12-4/Մ=ԲՄ10-3/Մ Հավելված N 3, մաս 3 (DOC3)

Ելքագրվող տվյալներ

- «**Հայ աստանի Հանրապետության առաջին կատարված ապետակների բյուջեի մասին**»
ՀՀ օրենքի հավելվածներ

ԲԱ12-1/Ե - [Հավելված N1 աղյուսակ N1. Ամփոփը ստորագրերի](#)

Տվյալ	Նկարագրություն
Ծրագրի դասիչ/անվանում	տեղեկատու
Գումար	թվային՝ մուտքագրվող տվյալ

ԲԱ12-2/Ե - [Հավելված N1 աղյուսակ N2. Ըստ ստորագրերի և միջոցառումների](#)

Տվյալ	Նկարագրություն
ԲԳԿ անվանում	տեղեկատու
Ծրագրի դասիչ/անվանում	տեղեկատու
Ծրագրի նպատակ	տեղեկատու
Վերջնական արդյունքի նկարագրություն	տեղեկատու
Միջոցառման դասիչ/անվանում	տեղեկատու
Միջոցառման նկարագրություն	տեղեկատու
Միջոցառման տեսակ	տեղեկատու
Գումար	թվային՝ մուտքագրվող տվյալ

ԲԱ12-3/Ե - [Հավելված N1 աղյուսակ N3. կապիտալ ծախսեր](#)

Տվյալ	Նկարագրություն
ԲԳԿ անվանում	տեղեկատու
Ծրագրի դասիչ/անվանում	տեղեկատու
Միջոցառման դասիչ/անվանում	տեղեկատու
Կառուցման աշխատանքներ	թվային՝ մուտքագրվող տվյալ
Վերակառուցման, վերանորոգման և վերականգնման աշխատանքներ	թվային՝ մուտքագրվող տվյալ
Նախագծահետազոտական, գեոդեզիաքարտեզագրական աշխատանքներ	թվային՝ մուտքագրվող տվյալ
Ոչ ֆինանսական այլ ակտիվների ձեռքբերում	թվային՝ մուտքագրվող տվյալ
Ընդամենը	թվային/հանրագումար/

ԲԱ12-4/Ե - Հավելված N1 աղյուսակ N4 վարկային ծրագրեր

Տվյալ	Նկարագրություն
ԲԳԿ անվանում	տեղեկատու
Ծրագրի դասիչ/անվանում	տեղեկատու
Միջոցառման դասիչ/անվանում	տեղեկատու
Վարկային միջոցներ	թվային՝ մուտքագրվող տվյալ
Համաֆինանսավորում	թվային՝ մուտքագրվող տվյալ

Ընդամենը	թվային/հանրագումար/
----------	---------------------

ԲԱ12-5/Ե - [Յավելված N1 աղյուսակ N5 դրամաշնորհային ծրագրեր](#)

Տվյալ	Նկարագրություն
ԲԳԿ անվանում	տեղեկատու
Ծրագրի դասիչ/անվանում	տեղեկատու
Միջոցառման դասիչ/անվանում	տեղեկատու
Դրամաշնորհային միջոցներ	թվային՝ մուտքագրվող տվյալ
Չամաֆինանսավորում	թվային՝ մուտքագրվող տվյալ
Ընդամենը	թվային/հանրագումար/

ԲԱ12-6/Ե - [Յավելված N1 աղյուսակ N6. ճանապարհների ընթացիկ պահպանություն](#)

Տվյալ	Նկարագրություն
Ծրագրի դասիչ/անվանում	տեղեկատու
Միջոցառման դասիչ/անվանում	տեղեկատու
Աշխատանքների անվանումը	տեքստային
Գումար	թվային՝ մուտքագրվող տվյալ

ԲԱ12-7/Ե - [Յավելված N1 աղյուսակ N7 սուբվենցիաներ համայնքների](#)

Տվյալ	Նկարագրություն
ԲԳԿ անվանում	տեղեկատու
Ծրագրի դասիչ/անվանում	տեղեկատու
Միջոցառման դասիչ/անվանում	տեղեկատու
Գումար	թվային՝ մուտքագրվող տվյալ

ԲԱ12-8/Ե - [Յավելված N1 աղյուսակ N8 սահմանամերձ](#)

Տվյալ	Նկարագրություն
Ծրագրի դասիչ/անվանում	տեղեկատու
Միջոցառման դասիչ/անվանում	տեղեկատու
ԲԳԿ անվանում	տեղեկատու
Գումար	թվային՝ մուտքագրվող տվյալ
Ընթացիկ տարի	թվային՝ մուտքագրվող տվյալ

ԲԱ12-9/Ե - [Յավելված N2. Դոտացիա](#)

Տվյալ	Նկարագրություն
ՀՀ մարզերի և համայնքների անվանումները	տեղեկատու
Հաշվարկվող տարվա (2022թ.) դոտացիայի ընդհանուր	

գումարի և բազային տարվա (2016թ.) ընդհանուր գումարի տարբերության բաշխումը	
Դոտացիայի գումարը բազային տարում (2016թ.)	
ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքների 2020թ. բյուջեների կորուստների փոխհատուցման գումարը	
Ընդամենը	թվային/հանրագումար/

ԲԱ12-10/Ե - [Հավելված N3.Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ](#)

Աղյուսակ1

Տվյալ	Նկարագրություն
Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներն ու դրանց տարրերի անվանումները	տեղեկատու
Ընթացիկ տարի	թվային՝ մուտքագրվող տվյալ

Աղյուսակ 1.1 պետական բյուջեի ֆինանսական ակտիվների ձեռքբերումների և ներգրավված փոխառու միջոցների մարումների գծով ելքերն ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների՝ ըստ բյուջետային գլխավոր կարգադրիչների

Տվյալ	Նկարագրություն
ԲԳԿ	տեղեկատու
Ծրագրի դասիչ/անվանում	տեղեկատու
Ծրագրի նպատակ	տեղեկատու

Վերջնական արդյունքի նկարագրություն	տեղեկատու
Միջոցառման դասիչ/անվանում	տեղեկատու
Միջոցառման նկարագրությունը	տեղեկատու
Միջոցառման տեսակը	տեղեկատու
Ընթացիկ տարի	թվային՝ մուտքագրվող տվյալ

0

ԲԱ12-11/Ե - [Յ ավ ե լ վ ա ծ N4.4Բ վ ար չ ա կ ան ծ ախ ս ե ր](#)

Տվյալ	Նկարագրություն
Ծախսային հոդվածների անվանումները	
Գումար	

ԲԱ12-12/Ե - [Յ ավ ե լ վ ա ծ N5, Ռ ա դ ի ո հ ա ճ ախ ա կ ան ու թ յ ու ն](#) -տեքստային

ԲԱ12-13/Ե - [Յ ավ ե լ վ ա ծ N 6Առ ա ջ ն ա հ ե ր թ ու թ յ ու ն](#)

Տվյալ	Նկարագրություն
ԲԳԿ	տեղեկատու
Միջոցառման անվանում	տեղեկատու
Գումար	թվային՝ մուտքագրվող տվյալ

ԲԱ12-14/Ե - [Յ ավ ե լ վ ա ծ N 7 Բ ն ա պ ա հ պ ան ա կ ան վ ճ ար ն ե ր](#)

Տվյալ	Նկարագրություն
Համայնքի անվանումը	տեղեկատու
Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին	թվային՝ մուտքագրվող տվյալ
Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին	թվային՝ մուտքագրվող տվյալ
Ընդամենը	թվային/հանրագումար/

• **ՀՀ կառավարության 2022 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր**

ԲԱ12-15/Ե - [Հավելված N1 Միջոցառումների .Տնտեսագիտակա.դաս](#)

Տվյալ	Նկարագրություն
ԲԳԿ	տեղեկատու
Ծրագրի դասիչ/անվանում	տեղեկատու
Միջոցառման դասիչ/անվանում	տեղեկատու
Ըստ կատարողի	տեղեկատու
Տնտեսագիտական հոդվածի անվանում	տեղեկատու
Գումար	թվային՝ մուտքագրվող տվյալ

ԲԱ12-16/Ե - [N1.1 Հավելված Միջոցառումների .Տնտեսագիտակա.դաս](#)

Տվյալ	Նկարագրություն
Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	տեղեկատու
Առաջիկա տարի նախագիծ	թվային՝ մուտքագրվող տվյալ

ԲԱ12-17/Ե-3 ավելված N2.3 ավելված .Գործառական .դասակարգման

Տվյալ	Նկարագրություն
Գործառական դասիչ(բաժին, խումբ, դաս)	տեղեկատու
